240

Հայոց վանական դասական



ԴԱՍԱԳՐՔ ՏԱՐՐԱԿԱՆ ՀՊՐՈՑԻ Դ. ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

2131

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԱԼԻՔ» ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ

ԱՒԱՆԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԴԱՍԱԳԻՐՔ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ Դ. ԴԱՍԱՐԱՆԻ

ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԵՑԻՆ՝

Ն. ԷԼՍԱՑԵԱՆ, Մ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ, Ն. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

ԹԵՀՐԱՆ
ՏՊԱՐԱՆ «ԱԼԻՔ»
1981

Սոյն դասագիրքը, որը կազմուել է Իրանահայ երեք թեմերի թեմական խորհուրդների կողմից կեանքի կոչուած «Հայերէն դասագրքերի կազմութեան յանձնախումբ»ի ծրագրի համաձայն եւ նրա յանձնարարութեամբ, տրւում է առ ի գործածութիւն իրանահայ դպրոցներում:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայոց աւանդական պատմութեան այս ձեռնարկը կազմելու նպատակադրումը եղել է մատաղ սերնդին հայ ժողովրդի աւանդոյթներին եւ նրա պատմութեան վաղ ժամանակաշրջանի հերոսական դէպքերին հաղորդակից դարձնելու գաղափարը: Աշխատութիւնը իր բնութագրով պիտի գայ հայ ժողովրդի պատմութիւնը ուսուցող ձեռնարկների շարանի նախաօղակը հանդիսանալու: Այս նախաօղակը թէպետեւ օրգանական իմաստով չի կապւում գիտական պատմութեան ընդհանրութեան, սակայն նկատի ունենալով հայ ժողովրդական բանահիւսութեան պատմարժէք հերդրումը մեր եւ մեր նախնիների կենցաղային իւրայատկութիւնների ու ըմբռնումների ընդհանրութեան մէջ, նպատակայարմար նկատեց գագաթային իմաստով, թէ՛ աւանդական պատմութիւնից եւ թէ՛ հայ ժողովրդական դիւցազնավէպից աշակերտութեան տրամադրել մի շարք հատուածներ: Սրանով հնարաւոր կը լինի նրանց մէջ առաջացնել մարդասիրական եւ հայրենասիրական գաղափարներ:

Աշխատանքի ժամանակ մեզ շարունակ զբաղեցրել է այն միտքը, որ գրքի նիւթերը չդառնան իմիջանպատակ պատմութիւններ, այլ իրենց պարունակութեամբ որոշ չափով կապ ստեղծեն ներկայ սերնդի եւ անցեալի աւանդների միջեւ:

Ընդհանրապէս ընտրել են այնպիսի նիւթեր, որոնք ունեն պարզ և դիւրմբռնելի կառոյց, իսկ բարդ նկատած դասերը աշխատել ենք պարզեցնել այն չափով, որ չխաթարւի բովանդակութեան հիմնական դրւածքը:

Գիրքը ունի երկու բաժին՝ «Աւանդական պատմութիւն» եւ «Սասունցի Դաւիթ»:

Գրքի Ա. բաժինը կազմելիս, օգտագործելով հանդերձ մի քանի գրքերի եւ դասագրքերի դասաւորումներն ու ուղղութիւնները, ստուգաբանութեան տեսակէտից հիմք ենք ընդունել Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւն»ը:

Որպէսզի հետագայ տարիներին, գիտական հայոց պատմու-

թիւնը անցնելիս երեխաների մտքում դէպքերի յաջորդականութեան ընկալման շփոթ չառաջանայ, այս բաժնի պատմութիւնը հասցւած է մինչեւ Քրիստոնէութեան հաստատումը Հայաստանում, որովհետեւ դրանից յետոյ աւանդական պատմութեան մէջ գործող անձանց մի մասը իրական պատմութեան մէջ եւս դերակատար են, սակայն ժամանակագրական տարբեր դասաւորումով:

Հայ ժողովրդի նկարագիրը բնութագրող «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպի առնչութեամբ, նիգ է թափւած դասագրքի տարողականութեան սահմաններում ընտրել եւ տեղադրել այնպիսի դրւագներ եւ երեւոյթներ, որոնք առաւել չափով գտնւում են մանկան հետաքրքրութեան ոլորտում:

Աշխատել ենք ըստ հնարաւորի դասերը ունենան պարզ շարադրանք եւ անմիջական ոճ, այդ պատճառով էլ անխուսափելի են եղել շարահիւսական որոշ զանցառումներ եւ տեղիք են տւած որոշ կրկնութիւնների:

Իւրաքանչիւր դասի ներքեւում դրւած են համեմատաբար դժւար ընկատւած բառերի պարզ բացատրականը՝ ըստ առումի: Տրւած բառ-բացատրականների բաժինը յանձնարարելի չէ օգտագործել որպէս առանձին հարցումների նիւթ:

Դասաւանդութեան ժամանակ չպիտի առաջնորդւել միայն դասերից յետոյ դրւած հարցերով· դրանք նկատի են առնւած որպէս օժանդակ միջոցներ:

Այս ձեռնարկը վստահաբար զերծ չէ թերութիւններից ու վրիպումներից, եւ պիտի աշխատենք յետագայ մշակումների ընթացքում վերացնել դրանք՝ ի նկատի ունենալով մեր յարգելի պաշտօնակիցների դիտողութիւններն ու առաջարկները:

ԿԱԶՄՈՂՆԵՐ

Մեծ և փոքր Արարատը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՐԱՍՏԱՆ
ԻՐԱՆ
ԹՈՒՐՔԻԱ
ՍԻՐԻԱ
ՄԻՋԵՐԿՐԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՐԱՍՏԱՆ
ԻՐԱՆ
ԹՈՒՐՔԻԱ
ՍԻՐԻԱ

Ա. ՄԱՍ

1 ԻՆՉՊԷՍ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՀԱՄԱԽՄԲԻԵԼ

Հազարաւոր տարիներ առաջ նախամարդիկ ապրել են առանձին – առանձին: Նրանք թափառել են վայրից վայր եւ հաւաքական կեանք չեն ունեցել:

Երկար ժամանակ տեւեց, մինչեւ մարդիկ հասկացան, թէ կեանքում կան այնպիսի գործեր, որոնք մարդ մի հայնակ չի կարող կատարել եւ պէտք ունի իր նմանների օգնութեանը. օրինակ՝ խմացան, որ եթէ միասին ապրեն, աւելի հեշտ են կարող կենդանիներ որսալ, պաշտպանուել եւ զանազան աշխատանքներ կատարել: Այդ պատճառով էլ երբեմն մի քանի հոգով միանում էին իրար, պէտք եղած աշխատանքը միասին կատարում եւ գործը վերջացնելուց յետոյ, ոտքից բաժանւում ու հեռանում էին իրարից:

Հազարաւոր տարիներ անցան, մինչեւ մարդիկ ըղգացին, որ պէտք է մշտապէս միասին լինեն ու իրար մօտ ապրեն: Այսպիսով առաջացաւ ընտանիքը, դրանից յետոյ՝ համքեցին տոհմերը, ապա՝ ցեղերը:

Ինչպէս ամէն ընտանիք ունի իր գլխաւորը, տոհմի կամ ցեղի մարդիկ էլ ունէին իրենց առաջնորդը, որը կոչւում էր նահապետ: Յաճախ նահապետի անունով է կոչւել իր ցեղը. օրինակ՝ Աբրահամի ցեղ, Բէլի ցեղ, Հայկի ցեղ եւ այլն:

Ցեղի բոլոր մարդիկ ընդհանրապէս հնազանդւում էին իրենց նահապետին:

Այդ ցեղերից մէկն էր հայ ցեղը, որի նահապետի

անունը Հայկ էր: Հայկ Նահապետին սիրում ու յարգում էին բոլոր հայերը եւ այդ պատճառով էլ նրան պաշտում էին որպէս աստուած:

ԲԱՌԵՐ

Համախմբել= *իրար շուրջ հաւաքել*
Թափառել= *այս ու այն կողմ շրջել*
Յաճախ= *շատ անգամ*
Ընդհանրապէս= *սովորաբար, առհասարակ*

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչպէ՞ս են ապրել նախամարդիկ սկզբում:
2.— Ինչո՞ւ են մարդիկ իրար շուրջ հաւաքուել եւ միասին ապրել:
3.— Ի՞նչ է կոչւել տոհմի կամ ցեղի առաջնորդը:





Հայկ Նահապետ

2 ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ

Շատ հին ժամանակներում, ինչպես բոլոր ցեղերը այնպես էլ հայերը տարւայ ընթացքին թափառել են տեղից տեղ՝ տաք եղանակից եւ կանաչազարդ ու պաղատու դաշտերից օգտւելու համար:

Տիգրիս եւ Եփրատ երկու մեծ գետերի միջեւ կար մի երկիր, որը կոչւում էր Բաբելոն: Շատ ուրիշ ցեղերի հետ մէկտեղ Հայկ Նահապետի ցեղն էլ ապրում էր Բաբելոնում:

Հայկը զեղեցիկ էր, լայնաթիկունք. ունէր զանգուր մազեր եւ վառվռուն աչքեր: Նա շատ քաջ էր եւ ուժեղ: Նա սէրում էր ազատութիւնն ու բարութիւնը եւ ատում էր բռնակալներին:

Բաբելոնում ապրում էր նաեւ մի այլ ցեղ, որի առաջորդը Բէլն էր: Նա չար էր ու դաժան, չէր կարողանում տեսնել ուրիշ ցեղերի ազատութիւնը, այդ պատճառով էլ չատերին զարձրել էր իր գերին ու ծառան:

Ազատասէր ու խաղաղասէր Հայկը չուզեց ընդունել Բէլի գերիշխանութիւնը, այդ պատճառով հաւաքեց չուրջ երեք հարիւր հոգու հասնող իր զաւակներին, թոռներին ու ազգականներին, ինչպես նաեւ իր այլ մարդկանց, դուրս եկաւ Բաբելոնից եւ գնաց դէպի հիւսիս: Երկար ճամբորդելուց յետոյ, նրանք հասան բարձր ու զեղեցիկ լեռներով ծածկւած մի երկիր, որը կոչւում էր Արարատ*: Այստեղ Հայկ Նահապետը մի գիւղ չինեց, որը իր չրջապատով յանձնեց իր թոռներից Կադմոսին:

Հայկը կարճ ժամանակ այդտեղ մնալուց յետոյ, իր զաւակների եւ միւս թոռների հետ նորից չարժւեց դէպի հիւսիս եւ հասաւ Վանայ լճի ափը: Այստեղ, լեռ-

---

* Արարադի երկիրը տարածւած էր Վանայ լճից դէպի հարաւ եւ չպէտք է շփոթել այն Այրարատեան նահանգի հետ, որը գտնւում էր Հայաստանի կենտրոնական շրջանում:

Նեղոսի ափերուն մի կանաչածածկ ու ջրառատ դաշտում իր մարդկանց հետ բնակութիւն հաստատեց եւ հիմնեց մի գիւղ, որը իր անունով կոչեց Հայկաշէն, իսկ շրջանը՝ Հարբ:

Այդ շրջանում, շատ հին ժամանակներից սկսած, ապրում էին մի շարք այլ ցեղեր, որոնք աստիճանաբար, իրենց կամքով ենթարկուեցին Հայկին: Այսպիսով առաջացաւ հայ ազգը, որի երկիրը կոչուեց Հայաստան:

ԲԱՌԵՐ

Պտղատու= *պտուղ տուող*
Վաւվռուն= *փայլուն, բոցավառ*
Ատել= *չսիրել*
Բռնակալ= *խիստ եւ անտանելի իշխանաւոր*
Դաժան= *անգութ, անտանելի*
Գերիշխանութիւն= *տիրապետութիւն*
Բնակութիւն հաստատել= *մի տեղ մնալ ապրելու համար*

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչպիսի՞ մարդ էր Հայկ Նահապետը եւ հայերը ի՞նչ վերաբերմունք ունէին նրա նկատմամբ:

2.— Հայկ Նահապետը իր ցեղի հետ սկզբում որտե՞ղ էր ապրում:

3.— Ո՞վ էր Բէլը եւ ինչպէ՞ս էր վարուում մարդկանց հետ:

4.— Հայկը իր մարդկանցով ինչո՞ւ է հեռանում իր բնակարանից:

5.— Որտե՞ղ էր գտնուում Հարբը եւ ի՞նչ էր կոչուում

Հայկի կառուցած գիւղը:

6.— Ի՞նչ գիտէք կադմոսի մասին:

7.— Ինչպէ՞ս առաջացաւ հայ ազգը եւ ի՞նչ է կոչւում նրա հայրենիքը:

ՔԱՐՏԷԶԻ ՎՐԱՅ ՅՈՅՅ ՏԻԷՔ

1– *Տիգրիս եւ Եփրատ գետերը*
2– *Արարատ երկիրը*
3– *Վանայ լիճը*
4– *Սեւանայ լիճը*



3 ՀԱՅԿԻ ԵՒ ԲԷԼԻ ԿՌԻՒԸ

Ա.

Բէլը երբ լսեց, որ Հայկը հեռացել է իր մօտից, շատ բարկացաւ, բայց յետոյ մտածեց իր մարդկանցից մի քանիսին ուղարկել, որպէսզի Հայկին համոզեն եւ վերադարձնեն:

Այդ ժամանակ Հայկը իր ցեղի մարդկանցով զբաղւած էր ծառեր ու այգիներ տնկելով եւ դիւղերը շինելով:

Բէլի մարդիկ եկան նրա մօտ եւ յայտնեցին իրենց տէրոջ խօսքերը. «Ինչո՞ւ ես գնացել այդ ցուրտ ու սառնամանիք երկիրը, վերադարձի՛ր եւ հնազանդւելով ինձ հանգիստ ապրի՛ր իմ երկրում, ուր որ կուզես»:

Ազատասէր Հայկը խստութեամբ պատասխանեց ու ասաց.

— Գնացի՛ք ձեր տէրոջն ասացի՛ք, որ ես ու իմ ցեղը պրծնել ենք ապրել այս ցուրտ երկրում՝ թէպէտ դժւարութեամբ ու նեղութեամբ, բայց ազատ եւ երբեք պատրաստ չենք վերադառնալ եւ դաժան Բէլի գերին դառնալ:

Բէլի մարդիկ վերադարձան ու յայտնեցին հայոց նահապետի պատասխանը: Բռնակալը սաստիկ բարկացաւ, հաւաքեց իր հրամանի տակ գտնւող մարդկանց եւ մեծ զօրքով Բաբելոնից չարժւեց դէպի Արարատ երկիրը:

Երբ Բէլի զօրքը հասնում է Արարատ, Հայկի թոռը՝ Կադմոսը վախչում է իր պապի մօտ եւ նրան յայտնում, որ Բէլն անհամար զօրքով գալիս է դէպի Հայկաշէն:

ԲԱՌԵՐ

Սառնամանիք = *սաստիկ ցուրտ*
Հնազանդել = *ենթարկւել*
Անհամար = *անչափ, շատ*



Հայկի ու Բելի կռիւը

Բ.

Հայկը հասարքում է իր զաւակներին, թոռներին ու ցեղի մեծ մարդկանց եւ դիմելով այդ փոքրաթիւ, բայց ազատասէր ու քաջ կռուողներին ասում է.

— Գոռող ու բռնակալ Բէլը չատ ցեղերի երեն գերի դարձնելուց յետոյ, հիմա գալիս է հայ ցեղի վրայ, որ մեզ էլ իր գերին դարձնի. պէտք է քաջութեամբ կռւենք նրա զօրքերի դէմ, կամ էլ յաղթենք եւ կապրենք ազատ, կամ էլ մեռնենք ազատութեան համար:

Այս խօսքերից յետոյ, հայոց նահապետը իր քաջերով առաջ չարժուեց եւ անցնելով բարձր լեռներից՝ հանդիպեց Բէլի բանակին: Թշնամու զօրքերը թիւով չատ էին, բայց կարգ ու կանոն չունէին:

Բէլը գիխին դրել էր սաղաւարտ, հագել էր պղնձեայ պրահ, սուրը կապել էր մէջքին եւ չրջապատուած էր գինուած մարդկանցով:

Սկսեց կատաղի կռիւը: Երկու բանակները խառնըւեցին իրար. ահագին դղրդիւն բարձրացաւ: Մարդիկ կռւում էին՝ ամէն ինչ մոռացած. երկու կողմերից էլ քաջեր էին ընկնում: Տեսնելով Հայկի ուժը, Բէլը սարսափած սկսեց յետ քաչել, մինչեւ իր մնացած զօրքը տեղ հասնի:

Հայկ Նահապետը հասկանալով Բէլի միտքը, առաջ անցաւ. ծունկը տւեց գետնին, քաչեց իր լայնալիճ աղեղը, նշան բռնեց Բէլի կուրծքը եւ թաց թողեց նետը: Հայկի արձակած երեքթեւեան նետը պատռելով բռնակալի պրահն ու ափրտը, դուրս եկաւ թիկունքից եւ խրւեց գետնին: Բէլը ցած գլորւեց ու չունչը փչեց:

Բէլի գինուորները, տեսնելով իրենց առաջնորդի սպանութիւնը, սկսեցին ամէն մէկը մի կողմ փախչել:

Կռւից յետոյ, Հայկը Բէլի գիսակը թաղել տւեց մի

բարձր բլուրի վրայ եւ այդ վայրը կոչեց Գերեզմանիք: *Հայոց Նահապետան այս դործով ուզեց իր սերունդներին ցոյց տալ, որ իրենց պապերը քաջ ու ազատասէր մարդիկ են եղել եւ կուռել ու յաղթել են թշնամիներին:*

Այդ կուռի վայրում Հայկը չհնռել է տալիս մի բնակավայր եւ անունը դնում է Հայք, որը յետոյ կոչուեց Հայոց Ձոր:

ԲԱՌԵՐ

Գոռոզ= *ինքնահաւան*
Սաղաւարտ= *մետաղէ գլխարկ*
Զրահ= *մետաղից սարքւած կարճ հագուստ, որ պատերազմի ժամանակ էին հագնում*
Կատաղի= *ուժգին, սաստիկ*
Դղրդիւն= *շատ ուժեղ ձայն*
Սարսափած= *սաստիկ վախեցած*
Լայնալիճ աղեղ= *այն աղեղը, որի երկու ծայրերը իրարից շատ հեռու են:*

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչո՞ւ Հայկը չի վերադառնում Բէլի մօտ:
2.— Բէլը Հայկի պատասխանը լսելուց յետոյ, ի՞նչ է անում:
3.— Ինչո՞վ է վերջանում Հայկի եւ Բէլի կռիւը:
4.— Ի՞նչ գործեր է անում Հայկը կռւից յետոյ:

ՔԱՐՏԷԶԻ ՎՐԱՅ ՅՈՅՑ ՏԻԼՔ

Հայքը

5. ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

Հայկից յետոյ, նրա անդրանիկ որդին՝ Արմենակը հայոց նահապետը դարձաւ: Նա Հայկաշէնն գաւառը յանձնեց իր խոռ ու Մանաւազ եղբայրներին եւ ինքը իր ընտանիքով գնաց եւ հաստատուեց բարձր ու գեղեցիկ լեռներով շրջապատուած մի կանաչազարդ եւ ջրառատ դաշտում:

Այդ երկրամասի ամենաբարձր լեռները էին Արարատը* եւ Արագածը*: Ժամանակի ընթացքում բազմացաւ Արմենակի ցեղը եւ տարածուեց երկրամասի տարբեր շրջաններում: Այդտեղ ապրում էին նաեւ ուրիշ ցեղեր, որոնք խառնուելով հայ ցեղի հետ, Արմենակին ընդունեցին որպէս իրենց նահապետը:

Արմենակն ապրեց երկար տարիներ եւ խաղաղութեամբ կառավարեց երկիրը: Նրա մահից յետոյ իր որդին՝ Արամայիսը դարձաւ հայոց նահապետ: Արամայիսը չինեց մի քաղաք, որը կոչեց Արմաւիր:

Արամայիսը Շարա անունով մի որդի ունէր, որին չատակերութեան համար սատում էին Շատակեր Շարա: Հայոց նահապետը Շարային ուղարկում է բռնագանութեամբ եւ աղբիւրներով հարուստ մի հայտառատ դաշտ, որը Շատակեր Շարայի անունով կոչեց Շիրակի դաշտ:

Արամայիսի որդիները ու թոռները նրա մօտից հեռանալով, տարիների ընթացքում բազմացան, բաժանուեցին իրարից եւ այնպէս ցրուեցին հայոց երկրի տարբեր կողմերում, որ պատերազմի ժամանակ այլեւս չկարողացան իրար օգնութեան հասնել: Այս բանից օգտուելով թշնամիները սիրեցին Հայաստանին եւ սկսեցին տուրք առնել հայերից:

---

* Արարատ կամ Մասիս լեռը Հայաստանի ամենաբարձր սարն է եւ ունի երկու գագաթ՝ Մեծ Մասիս եւ Փոքր Մասիս: Արագած լեռը գտնւում է Մասիսներից դէպի հիւսիս· սա եւս հայոց երկրի բարձր սարերից է եւ ունի չորս գագաթ, այդ պատճառով էլ կոչւում է Քառագագաթ:

ԲԱՌԵՐ

Անդրանիկ= *առաջին*
Բազմանալ= *շատանալ*
Տիրել= *գրաւել*

ՀԱՐՑԵՐ

1.— Ի՞նչ գիտէք այն երկրամասի մասին, ուր Արմենակը իր ընտանիքով եւ մարդկանցով բնակութիւն հաստատեց:
2.— Ինչո՞վ է յայտնի Արամայիսի որդի՝ Շարան:
3.— Ինչո՞ւ թշնամին կարողացաւ տիրել Հայաստանին:
4.— Ի՞նչ է կոչւում Արամայիսի շինած բաղաքը:

ՔԱՐՏԷԶԻ ՎՐԱՅ ՅՈՅՑ ՏԻԷՔ

1– *Արարատ (կամ Մասիս) լեռը*
2– *Արագած լեռը*
3– *Սիփան լեռը*
4– *Արմաւիր քաղաքը*
5– *Շէրամկի դաշտը*

6 ԱՐԱՄ ՆԱՀԱՊԵՏ

Արամատյախի թոռներից Աբրամը յայտնի դարձաւ իր կատարած գործերով: Նա աշխատասէր, քաջ եւ հայրենասէր նահապետ էր:

Արամը երբ տեսնում է թէ թշնամիները ամէն կերպ աշխատում են թուլացնել հայ ժողովրդին եւ աւերել Հայաստանը, այս խօսքերն է ասում.

— Աւելի լաւ է ես մեռնեմ, քան թէ տեսնեմ, որ իմ ցեղն ու հայրենիքը օտարների գերին են դարձել:

Մարերի Իշխան Նիւբարը, որը հպարտ եւ կռւասէր մարդ էր, մեկնում էր այդ թշնամիներից: Սա յարձակւելով Հայաստանի վրայ, գրաւեց այն եւ երկու տարի իր գերիշխանութեան տակ պահեց հայոց երկիրը:

Արամը իր քաջերով արշաւեց Նիւքարի զօրքերի վրայ եւ յաղթելով նրան, երկիրը ազատեց թշնամու գերութիւնից: Այդ պատերազմի ժամանակ Արամը գերի բռնեց Նիւքարին եւ տարաւ Արմաւիր: Այնտեղ նրա ճակատին մի մեխ խփեցին ու կախեցին մի բարձր աշտարակից, որպէսզի բոլորը տեսնեն, թէ հայոց ազատասէր նահապետն ինչպէս է պատժում իր հայրենիքի թշնամիներին:

Հայաստանի թշնամին էր նաեւ Ասորեստանի Բարշամ իշխանը, որը դաժան եւ բռնակալ մարդ էր: Արամը մի արիւնահեղ պատերազմում սպանեց Բարշամին եւ ցրեց նրա զօրքը:

Արամը դրաւեց Կապադովկիան եւ Մշակ անունով իր զօրավարներից մէկին նշանակեց այդ երկրի կառավարիչ: Մշակը հրամայեց, որ Կապադովկիայի ժողովուրդը խօսի հայերէն: Նա այնտեղ կառուցեց մի քաղաք, որը իր անունով կոչեց Մշակ (Մաժակ):

Արամը հայոց երկրի ազատութեան համար շատ քաջագործութիւններ է կատարում. նա ընդարձակում է երկրի սահմանները եւ մեծ աշխատանք է տանում Հայաս-

Նիւթերը կախուած

ուանի պարզացման համար: Այդ պատճառով էլ նա յայտնի դարձաւ Հայաստանի հարեւան երկրների մօտ:

Օտարներն Արամէ անուանով հայերին կը ճանչին Արմէն, իսկ Հայաստանը՝ Արմենիա:

ԲԱՌԵՐ

Արշաւել= յարձակուիլ
Արիւնաւէտ= շատ արիւն թափուող
Ընդարձակել= մեծացնել, լայնացնել

ՀԱՐՑԵՐ

1.— Արամը Հայաստանի վիճակը տեսնելով, ի՞նչ է ասում:
2.— Ի՞նչ նպատակով Արամը Նիւբարին կանչել տուեց:
3.— Ի՞նչ գիտէք Մշակ գօրավարի մասին:
4.— Ի՞նչ վիճակի հասաւ Հայաստանը Արամի նահապետութեան տարիներին:

ՔԱՐՏԷԶԻ ՎՐԱՅ ՅՈՅՑ ՏԻԷՔ

1– Ատրեատանը
2– Կասպատովկիան
3– Մարտաստանը

7 ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՇԱՄԻՐԱՄ

Արամի մահից յետոյ, նրա որդին՝ Արան, դարձաւ հայոց նահապետ: Հայ ժողովուրդը Արայնին իր պեղեցկութեան համար կոչեց Արա Գեղեցիկ:

Արան հայրենասէր, քաջ եւ ազնիւ մարդ էր: Հայ ժողովուրդը շատ էր սիրում իր բարի եւ խաղաղասէր նահապետին, որը մշտապէս հոգում էր ուրախ եւ երջանիկ:

Արայի ժամանակ Ասորեստանը շատ էր ուժեղացել: Այդ ժամանակ իշխում էր Շամիրամ թագուհին, որ ասպանդով իր ամուսնուն, գրաւել էր նրա գահը:

Արայի գեղեցկութեան հռչակը հասնում է Շամիրամին եւ սիրահարւում է նրա վրայ: Ասորեստանի թագուհին իր մարդկանց միջոցով Արայինն հրաւիրում է իր մօտ, խոստանալով, որ եթէ հայոց նահապետը իր հետ ամուսնանայ, կատարեալ նրա ամբողջ հարստութիւնը եւ կը դառնայ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Ասորեստանի թագուհը:

Արան չի ընդունում Շամիրամի առաջարկը: Շամիրամը, երբ լսում է Արայի պատասխանը, բարկանում է եւ մեծ զօրքով գալիս է Հայաստանի վրայ: Նա իր գինուորներին հրամայել էր չսպանել Արային, այլ ողջ բռնել նրան: Բայց պատերազմի տաք ժամանակ, երբ Արան եւ իր զօրքը քաջութեամբ կռւում էին թշնամու հարուած բանակի դէմ, սպանուում է Արան եւ հայերը պարտուում են:

Կռիւը վերջանալուց յետոյ, Արայի դիակը առնում են Շամիրամի մօտ: Ասորեստանի թագուհին շատ է տխրում իր սիրածի մահուան առթիւ:

Հայոց զօրքը Արայի սպանութեան վրէժն առնելու համար, պատրաստւում է նորից պատերազմել: Այդ ժամանակ Շամիրամը ասում է, թէ կնքում է իր առաջարկին հրաժարել է լինել Արայի վէրքերը եւ նա վրը կենդանանայ:

Շահրամը նրա վրայից վիժեցնում է տապ

Արշ ժամանակից յետոյ, երբ տեսնում է, որ Արան այլևս չի կենդանանալու, նրա դիակը դնել է տալիս մի խոր փոսի մէջ: Զարտաւիրտ Շամիրամը հայոց զօրքին հանդարտացնելու համար, դիմում է խորամանկութեան. նախ մարդկանցից մէկին, որը նման էր Արային, նրա հագուստներն է հագցնում եւ հետևից ցոյց տալով հայ զօրքերին, ասում է, որ աստուածները վերակենդանացրել են հայոց նահապետին: Ապակողով վերջանում է պատերազմը եւ Հայաստանը մնում է Ասորեստանի գերիշխանութեան տակ:

Ասում են, որ Արայր անունով է կոչւել Այրարատեան դաշտը:

ԲԱՌԵՐ

Իշխել= *կառավարել, տիրել*
Հռչակ= *բարի անուն, լուր*
Ողջ= *կենդանի, ապրող, առողջ*
Պարտել= *յաղթել*
Զարասիրտ= *չար սիրտ ունեցող, անգութ*

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչպիսի՞ մարդ էր Արան:
2.— Ինչո՞ւ Շամիրամը յարձակուեց հայոց երկրի վրայ:
3.— Ինչո՞ւ Շամիրամը Արայի դիակը մի որոշ ժամանակ պահեց իր մօտ:
4.— Ասորեստանի թագուհին հայ գիւղացիներին խաբելու համար ի՞նչ արաւ:

ՔԱՐՏԷԶԻ ՎՐԱՅ ՅՈՅՑ ՏԻԷՔ

Այրարատեան դաշտը

8. ԱՐԱՅԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

Արայի մահից յետոյ, Շամիրամը տիրացաւ Հայաստանին: Նա տեսնելով հայոց երկրի գեղեցիկ բնութիւնը եւ մաքուր օդը, վճռեց մի քիչ ամառանոց կառուցել՝ ամառները այնտեղ անցկացնելու համար:

Շամիրամը Արայի որդուն՝ կարդոսին կոչեց Արա եւ նրան նշանակեց Հայաստանի կառավարիչ: Սա մեր պատմութեան մէջ յայտնի է Արա Արայեան անունով:

Ասում են Արա Արայեանը մեռաւ Շամիրամի հետ՝ պատերազմի դաշտում:

Արա Արայեանը մի որդի ունէր Անուշաւան անունով, որին հայրը փոքր տարիքում առնում է Ամասիայի մօտ գտնուող Սօսեաց անտառը եւ նրանից արբուգան ծառերին: Այս դէպքից յետոյ նա կոչւում է Անուշաւան Սօսանվէր:

Սօսեաց անհատոնեքում վայրի խոշոր առիւծներով, թարթմր ու գեղեցիկ ծառեր: Մեր պատմերը շատ հին ժամանակ պաշտում էին այդ ծառերը եւ դրանց առիւծների ոտտակիանից պուշակութիւններ էին անում:

Ինքնացի եւ քաջ Անուշաւան Սօսանվէրը, հօր մահից յետոյ, պատերազմում է Ասորեստանի թագաւորի դէմ եւ ազատում է հայոց երկիրը նրա գերիշխանութիւնից:

Անուշաւանից յետոյ, հայերն ունեցել են մի շարք նահապետներ, որոնք արդեան էլ հետաքրքիր դէպքեր չեն կատարել: Դրանց մէջ նշանաւոր է Զարմայրը, որը քաջութեամբ կռուեց յոյների դէմ եւ պոհեց պատերազմի դաշտում:

ԲԱՌԵՐ

Տիրանալ= տէր դառնալ
Շիեղ= ճոխ, շատ գեղեցիկ
կառուցել= սարքել

Մահմեդական հրամանատարը ձիավորների գնդով
մտնում է Սուրբ Յակոբ վանքը

ՀԱՐՑԵՐ

1.— Արայի մահից յետոյ, Շամիրամը ի՞նչ գործեր է անում:

2.— Ի՞նչ գիտէք Սօսեաց անտառի մասին:

3.— Ինչպէ՞ս է վարուում Արա Արայեանը իր որդու հետ:

4.— Ի՞նչ գործեր է կատարել Անուշաւան Սօսանուէրը:

5.— Անուշաւան Սօսանուէրից յետոյ եկող նահապետներից ո՞վ է յայտնի եւ ի՞նչ գործով:

9 ՊԱՐՈՅՐ ԹԱԳԱՒՈՐ

Զարմայրից յետոյ Եկող նահապետների մէջ չկան արտակարգները, որոնք իրենց ժողովրդի եւ երկրի համար կարեւոր դերեր կատարած լինեն: Այդ պատճառով էլ նրանց ժամանակ հայոց երկիրը պնակալից էր թուացել, որ թշնամի ներխուժել էին Հայաստանը եւ հարկ էին առնում ժողովրդից:

Այսպիսի ծանր դրութեան մէջ էր երկիրը, երբ Պարոյր Սկայորդին գահակալեց հայոց նահապետը, որը աչքի էր ընկնում հայրենասիրութեամբ եւ քաջագործութեամբ: Սրա ժամանակ Ասորեստանը շատ էր ուժեղացել: Ասորի դաժան վերնահարկերը շատ էին տանջում իրենց պետերին: Երկրի աղքատ լինելու պատճառով, ասորի իշխանները ամէն կողից վարձկան զինուորներ էին հաւաքում եւ յաճախ յարձակվելով հարեւան երկրների վրայ, կողոպտում էին այդ երկրների ժողովուրդներին:

Ասորեստանի հպատակ ժողովուրդները շատ էին նեղւում այդ վիճակից եւ աշխատում էին ամէն կերպ ազատել նրա անտանելի ներքինախտութիւնից:

Պարոյր նահապետն էլ սկզբում հարկ էր վճարում Ասորեստանին, բայց չարունակ մտածում էր իր հայրենիքից դուրս քշել նրանց եւ իր պապերի նման ազատ տպրել:

Հայաստանին հարեւան էր նաեւ Մարաստանը, որը դնալով հզօրանում էր: Պարոյրը եւ Մարաստանի թագաւոր Կիաքսարը մշտական են իրար եւ հաշվակից ու մարտական ոգով յարձակվում են Ասորեստանի վրայ, պարտութեան մատնում ասորական զօրքերին եւ գրաւում նրանց մայրաքաղաք՝ Նինուէն:

Այդ յաղթական պատերազմից յետոյ, Պարոյր Սկայորդին ճանաչեց որպէս հայոց առաջին թագաւորը եւ այսպիսով սկսեց հայկական թագաւորութիւնը:

ԲԱՌԵՐ

Դաժան = *անգութ, անխիղճ*

Տանջել = *չարչարել*

Վարձկան = *վարձով աշխատող*

Կողոպտել = *թալանել*

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ վիճակի մէջ էր Հայաստանը Պարոյր Նահապետից առաջ:
2.— Ի՞նչ գործերով էին զբաղուած ասորի իշխանները:
3.— Ի՞նչ է անում Պարոյր Սկայորդին մարերին միանալուց յետոյ:
4.— Ինչո՞վ է յայտնի Պարոյր Նահապետը:

ՔԱՐՏԷԶԻ ՎՐԱՅ ՅՈՅՅ ՏԻԷՔ

1– *Մարտաստանը*

2– *Նինուէ քաղաքը*

10. ՏԻԳՐԱՆ ԵՐԻԱՆԴԵԱՆ ԵՒ ԱԺԴԱՀԱԿ

Պարսյից կեսոյ ևկող թագաւորներից յայտնի է Հրաչեան: Սա Բաբելոնի թագաւորի հետ մխամիտ վարուել է Հրէաստանի դէմ եւ գրաւելով հրեանների մայրաքաղաք Երուսաղէմը՝ մեծ թիւով գերիներ է տարել եւ բնակեցրել Հայաստանում:

Հրաչեայից յետոյ Հայաստանում մի քանի հայ թագաւորներ իշխեցին. դրանց մէջ աչքի էր ընկնում Երւանդը:

Երւանդ թագաւորի որդին՝ Տիգրանը, երկրի տարբեր գործերում օգնում էր իր հօրը: Տիգրանը սիրուեց հայ ազնուականների, որովհետեւ նա քաջ էր, արդարադատ եւ պաշտպանում էր խեղճերին. սիրում էր ազատութիւնը եւ իր հայրենիքը: Հայ դատաւորներն ու երիտասարդները՝ օգտուելով ժողովրդական զրոյցներից գեղեցիկ երգեր են առել ծնել նրա մասին: Այդ երգերում նրանք գովում էին Տիգրանի խելացիութիւնը, քաջութիւնը, նրա բարձր հասակը, գանգուր մազերը եւ քաղցր ու բարի նայուածքը:

Այդ ժամանակ մարերի թագաւորն էր Աժդահակը: Սա չարամիտ, վատասիրտ եւ դաժան մարդ էր: Տիգրանը եւ մարերի օրրամայր կիւրոսը մանկութեան մտերիմ բարեկամներ էին: Այս մտերմութիւնն ու բարեկամութիւնը զրգռում էր մարերի չար թագաւորի նախանձը եւ նա մտածում էր վնասել Տիգրանին:

Այս մտքերով տարուած, Աժդահակը մի գիշեր երազում տեսաւ ծիրանատիպեաս, երեսը երկնագոյն քօղով ծածկած մի կնոջ, որը նստել էր մի բարձր աոյի գագաթին, իսկ ինքը, Աժդահակը, այդ լեռան մօտ վանդակած, հետզհետէ նայում էր այդ տեսարանին: Այդ ժամանակ ծիրանատիպեաս կնոջից ծնւում են երեք քաջեր: Գայլերից առաջինը՝ մի առիւծի վրայ նստած, սրանում է դէպի արեւմուտք, երկրորդը՝ մի ինձի վրայ սլանում է դէպի հիւսիս, երրորդը՝ մի հսկայական մի-ուղի հեծած, սլանում է դէ-

ալ Մարտաստան: Այդ խառն երամի մէջ առաքաւիահաւը Աժդահակին թեւից թէ կանգնած է իր պալատի վտուրին եւ վիշապ հեծած քաջը՝ արծուի պէս թեւեր առած, յարձակուում է մարելի թագաւորի կուռքերի վրայ եւ ակսում է չարչրել դրանց: Աժդահակը առաջ է վազում նրան ապանելու համար, բայց ինքն է կրծանուում:

Աժդահակը խիստ վախեցած վեր է թռչում քնից, չտալ իր մօտ է կանչում պալատականներին եւ տեսած երազը պատմում է նրանց:

Նրա երազի մեկնքը այսպէս է բացատրում, թէ երազում տեսած բարձր սարը Հայաստանն է, իսկ վիշապի վրայ նստած քաջը՝ հայոց Տիգրան թագաւորը, որը պիտի է յարձակուել Մարաստանի վրայ եւ խորտակել նրա թագաւորութիւնը:

Այս երազից յետոյ Աժդահակը որոշում է խարէութեամբ վերջ տալ Տիգրանի կեանքին, որովհետեւ պիտի պատերազմի դաշտում չի կարող յաղթել նրան:

ԲԱՌԵՐ

Գուսան= աշուղ, երգիչ

Գրգռել= այստեղ նշանակում է մէկին ուրիշի հանդէպ չարացնել

Միրանի= կարմիր

Միրանագգեստ= կարմիր զգեստ

Ինձ= մի տեսակ գաղան (կատուպզինների ցեղից)

Վիշապ= մի տեսակ առասպելական հսկայ գազան


Արշաւել= արագօրէն վազել, յարձակուել

Կործանուել= տապալուել, խորտակուել, ոչնչանալ

Մերկ վիճակում երազ

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչո՞վ է յայտնի Հրաչեան:
2.—Ինչպիսի՞ մարդ էր Տիգրանը:
3.— Ինչի՞ վրայ է նախանձում Աժդահակը:
4.— Երազում ի՞նչ տեսաւ Աժդահակը·
5.— Ինչպէ՞ս բացատրեց մարեերի թագաւորի երազը:



11. ՏԻԳՐԱՆԻ ԿՈՒԻԸ ԱԺԴԱՀԱԿԻ ԴԷՄ

Խրամանակ Աժդահակը մի նամակ է գրում Տիգրանին եւ կեղծ ու քաղցր խօսքերով յայտնում է նրան, որ հայոց թագաւորի հետ բարեկամանալու նպատակով, ցանկանում է ամուսնանալ Տիգրանի քրոջ՝ Տիգրանուհու հետ:

Տիգրանը չգիտէր, որ Աժդահակը ուզում է իրեն խաբել. ուրախ ընդունում է բարեկամութեան առաջարկը եւ քրոջն ամուսնացնում է նրա հետ:

Որոշ ժամանակից յետոյ, մի օր Աժդահակը Տիգրանուհուն փոքձելու համար ասում է, թէ Տիգրանի կինը՝ Զարուհին նախանձում է նրան, այդ պատճառով ամուսնուն դրգռում է, որ սպանել տայ մարերի թագաւորին, Տիգրանը դառնայ Մարաստանի եւ Հայաստանի թագաւոր, իսկ Զարուհին՝ երկու երկրների թագուհի. ուրեմն իրենք պէտք է պո՛յչ լինեն այդ բանից:

Ուշիմ եւ խելացի Տիգրանուհին խորտիկ համարում է իր ամուսնու չար նպատակը, բայց այնպէս է ձեւացնում, որ իրօք թէ հաւատում է նրա խօսքերին: Տիգրանուհին առանձին առիթով իր եղբօրը յայտնում է Աժդահակի չարամիտ նպատակի մասին:

Երբ Աժդահակը համոզւում է, որ Տիգրանուհին հաւատացել է իր խօսքերին, լուր է ուղարկում Տիգրանին, որ մի վարձու զօրք հասցնի հանդիսական իրար: Տիգրանը իր քրոջից արդէն իմացել էր թէ Աժդահակը վնաս է մտածում իր մասին. այդ պատճառով էլ նրան յայտնում է, որ ինքը դիտէ ամէն ինչ:

Դրանից յետոյ հայոց թագաւորը Հայաստանից, Վրաստանից, Աղուանների երկրից եւ մես հարեւան երկրներից զօրք է հաւաքում եւ յարձակւում Մարաստանի վրայ:

Այդ ընթացքում Տիգրանուհին առիթ է գտնում վախճելու իր եղբօր մօտ:

Կատաղի պատերազմի ժամանակ Տիգրանը նվիրակի հարուածով սպանում է Աժդահակին եւ այսպիսով պատուհաս է մատնում թշնամուն:

Պատերազմի հետեւանքով մեծ թիւով մարդիկ դառնում են հայկական զօրքի գերին: Այդ գերիների մէջ էր նաեւ Աժդահակի կինը՝ Անոյշը: Տիգրանը այդ գերիների հետ լաւ վերաբերմունք է ունենում: Նրանց թերելով Հայաստան, բնակեցնում է երկրի տարբեր շրջաններում:

Այնուհետեւ Տիգրան Երանդեանը ապրեց երկար տարիներ եւ նուիրեց Հայաստանի բգնացման եւ զարգացման գործին:

ԲԱՌԵՐ

Խորամանկ= *խաբեբայ, կեղծ*

Առիթ գտնել= *այստեղ նշանակում է՝ յարմար ժամանակ գտնել*

Կատաղի= *շատ խիստ, ուժգին*

Հարուած= *զարկ*

Նիրհել= *կեանքը դնել որեւէ ճանապարհի*

Շէնացնել= *զարգացնել, կարգի գցել*

ՀԱՐՑԵՐ

1.— Ի՞նչ է անում Աժդահակը՝ Տիգրանի հետ բարեկամանալու համար:

2.— Ի՞նչ է անում Աժդահակը՝ Տիգրանուհուն իր եղբօր հետ թշնամացնելու համար:

3.— Իր ամուսնու խօսքերից յետոյ ի՞նչ է անում Տիգրանուհին:

4.— Ի՞նչ գիտէք հայերի եւ մարերի պատերազմի մասին:

5.— Ի՞նչ գործեր է կատարել Տիգրանը մարական պատերազմից յետոյ:

ՔԱՐՏԷԶԻ ՎՐԱՅ ՅՈՅՅ ՏԻԷՔ

1– *Վրաստանը*

2– *Աղւանքը* (*Աղւանների երկիրը*)





Վահագնը յարդ բերելիս (Յարդագողի ճանապարհ)

12 ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱՊԱՔԱՂ

Տիգրան Երանուհեանը երեք որդի ունէր, որոնցից մէկը Վահագնն էր: Սա իր հօր մահից յետոյ, դարձաւ հայոց թագաւորը:

Վահագնը իր հօր հետ միասին մասնակցել է բազմաթիւ պատերազմների: Աժդահակի դէմ ունեցած կռւի ժամանակ, Վահագնը մեծ քաջագործութիւններ կատարեց, որի պատճառով հայ ժողովուրդը նրան անւանեց Վիշապաբաղ Վահագն. այսինքն՝ վիշապների ջարդող եւ ըսպանող, իսկ մարերին էլ ասում էին օձերի կամ վիշապների ցեղ:

Հայ ժողովուրդը շատ էր սիրում քաջ Վահագնին, այդ պատճառով էլ նրան պաշտել է որպէս քաջութեան եւ պատերազմի աստուած:

Հայ հին դուսանները ու երգիչները դեղեցիկ երգեր եւ պատմութիւններ են յօրինել Վիշապաքաղ Վահագնի կեանքի եւ գործերի մասին:

Այդ գեղեցիկ երգերից մէկում պատմում են թէ մի անգամ Վահագնը գնում է Սարեասան եւ այնտեղի Բարշամ իշխանի յարդանոցից գարման է գողանում: Յարդի տարբակները երկնքում Հայաստան բերելու ժամանակ, յարդի մի մասը թափւել է ճանապարհին եւ մի սպիտակ ու երկար հետք է թողել երկնքում, որը այժմ էլ պարզկայ գիշերներին երեւում է: Ժողովուրդը այդ հետքի անունը դրել է Յարդագողի կամ Դարմանագողի ճանապարհ: *

Վահագնի համար Հայաստանի Աշտիշատի դասարում կառուցել է մի գեղեցիկ տաճար, որը կոչւել է Վահագնի սեպհական կամ Խաիէ Վահեան մեհեան:

---

* Յարդագողի ճանապարհը մի աստղախմբի անուն է, որը կոչւում է նաեւ Միւկաթին:

Վահագնի արձանը

ԲԱՌԵՐ

Բազմաթիւ= *շատ*
Յօրինել= *հնարել, ստեղծել*
Յարդ= *դարման*
Յարդանոց= *դարմանանոց*
Պարզկայ= *պարզ, անամպ*
Տաճար= *աղօթատեղի*
Մեհեան= *աղօթատեղի*

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչո՞ւ է վահագնը վիշապաբախ կոչւել:
2.— Ինչի՞ մասին է պատմում Յարդագողի ճանապարհ անուանումը:
3.— Ի՞նչ գիտէք վահէ վահեան մեհեանի մասին:
4.— Որպէս ինչի՞ աստուած են վահագնին պաշտել:



13 ԱՐՏԱՇԷՍ ԹԱԳԱՒՈՐ

Հայաստանի հին թագաւորներից մէկն էր Սանատրուկը, որի մահից յետոյ երեսանդ անունով մի հայ իշխան ինքն իրեն թագաւոր է յայտարարում: Սա վատվարած-ում էր, որ մի օր Սանատրուկի զաւակներից մէկը կարող է թագաւորութիւնը խլել իր ձեռքից, այդ պատճառով էլ կոտորել է տալիս Սանատրուկի ընտանիքի անդամներին:

Այդ կոտորածից ազատւում է միայն Արտաշէս անունով մի փոքրիկ երեխայ, որին իր դայեակը գաղտնի տանում է հովիւների մօտ: Մի յարմար առիթով այդ դայեակը լուր է ուղարկում հայոց հայրենասէր եւ քաջ իշխան Սմբատ Բագրատունուն, որ գայ եւ տանի երեխային:

Սմբատ Բագրատունին հայոց փոքրիկ իշխանին տանում է Պարսկաստանի թագաւորի մօտ: Արտաշէսը մեծանում է այդտեղ եւ տարիներ յետոյ, Սմբատ Բագրատունու եւ պարսիկների օգնութեամբ պատերազմում է Երանդի դէմ, սպանում է նրան եւ գրաւելով իր հօր գահը՝ դառնում է հայոց թագաւոր:

Արտաշէս թագաւորը կարճ ժամանակում Հայաստանը մաքրում է թշնամիներից եւ սկսում է խաղաղ եւ հնարաւոր աշխատանքի:

Հայաստանի սահմաններից դէպի հիւսիս ապրում էին ալանները: Սրանք ուրիշ լեռնաբնակ ցեղերի հետ միացած, Արտաշէսի ժամանակ, հիւսիս - արեւելեան կողմից յարձակւեցին Հայաստանի վրայ: Արտաշէսը հայրենի երկիրը պաշտպանելու համար նրանց դէմ դուրս եկաւ: Կռիւը տեղի ունեցաւ Կուր գետի ափին, որի ընթացքին ալանները թագաւորի տղան գերի ընկաւ Արտաշէսի ձեռքը: Թագաւորը իր տղային ազատելու համար հաչտութիւն է խնդրում եւ Արտաշէսին խոստանում է տալ՝ ինչ որ նա ուզէ, սակայն Արտաշէսը չի համաձայնւում:

Այդ բանից յետոյ ալանաց թագաւորի աղջիկը՝ Սա



Արտաշէս Ա. թագաւոր

թեցիկը, որը նոյնպէս անհանդիստ էր եղբօր վերաբերմունքից, գնում է կուր գետի մօտ. ափից ձայն է տալիս եւ անուշ ու խմաստուն խօսքերով խնդրում է հայոց թագաւորին՝ ազատել իր եղբօրը:

Արտաշէսը այդ խօսքերը լսելով, մօտենում է գետափին եւ տեսնելով Սաթենիկին՝ ափրահարում է նրա վրայ: Արտաշէսը մարդ է ուղարկում աղաներէց թագաւորի մօտ եւ յայտնում, որ ցանկանում է Սաթենիկի հետ ամուսնանալ: Ապառաց թագաւորը իր աղջկայ համար մեծ քանակու թեամբ ոսկի է պահանջում եւ Արտաշէսի ուղարկած մարդկանց ասում, թէ հայոց թագաւորը ո՞րտեղից կարող է տալ իր պահանջած ոսկին:

Գուսանները պատմում են, երբ Արտաշէսը լսում է այդ պատասխանը, վերցնում է կարմիր վաչկից պատրաստուած ոսկեօղ պարանը, հեծնում է իր ախրուան ձիին, անցնում է կուր գետը, պարանը գցում է Սաթենիկի մէջքը եւ փախցնում է նրան իր բնակավայրը:

Ապա հետեւ չքեղ հանդէսով տեղի է ունենում Արտաշէսի եւ Սաթենիկի հարսանիքը: Պատմում են, որ այդ հարսանիքի ժամանակ անձրեւի պէս առատօրէն ոսկի եւ մարգարիտ է տեղացել հարս ու փեսայի եւ հանդիսականների վրայ:

ԲԱՌԵՐ

Դայեակ= *ուրիշի երեխային պահող կին*
Լծել= *գործի անցնել*
Շինարար= *որեւէ բան կառուցող*
Քանակ= *թիւ, չափ*
Պարան= *թոկ*
Տեղալ= *թափուել*
Հանդիսական= *հանդէսին մասնակցող*

Կիսամշակ և Սպիտակ

ՀԱՐՑԵՐ

1.— Սանատրուկից յետոյ ո՞վ է դառնում հայոց թագաւոր եւ ի՞նչ է անում:

2.— Ո՞վ էր Արտաշէսը եւ ինչպէ՞ս են անցնում նրա մանկութեան տարիները:

3.— Ինչպէ՞ս է Արտաշէսը թագաւոր դարձել:

4.— Ովքե՞ր էին պատանիները եւ ի՞նչ գիտէք նրանց ու հայերի միջեւ տեղի ունեցած կռւի մասին:

5.— Ինչո՞ւ է Արտաշէսը փախցնում Սաթենիկին:

6.— Ի՞նչ են պատմել գուսանները՝ Արտաշէսի եւ Սաթենիկի հարսանիքի մասին:



14 ԱՐՏԱՇԷՍԻ ՄԱՀԸ ԵՒ ԱՐՏԱԻԱԶԴ

Շինարար եւ բարեգործ մարդ էր Արտաշէսը: Նրա ժամանակ Հայաստանում կառուցեցին նորանոր քաղաքներ եւ դիւղեր, բացեցին ճանապարհներ եւ պարզացան երկրագործութիւնն ու արհեստները:

Արտաշէսը մեռնում է խոր ծերութեան մէջ, սուգի մատնելով հայ ժողովրդին:

Հայոց թագաւորի թաղումը կատարւում է մեծ շուքով եւ այն օրերի սովորութիւններով համաձայն: Սգաւոր հարազատները, դինուորները, իշխանները ու ժողովուրդը մեծ բազմութեամբ հաւաքւել էին Արտաշէսի դագաղի շուրջ: Փողերով մխուր եղանակներ էին նւագում. մի շարք մարդիկ նրա դիակի վրայ խնքնասպանութիւն են գործում:

Արտաշէսը Արտաւազդ անունով մի չարամիտ որդի ունէր: Սա նոյնիսկ նախանձում էր իր հօրը: Այդ պատճառով էլ տեսնելով իր հօր թաղման պատրաստութիւնները, չարանում է ու ասում.

— Հա՛յր դու պնացիր եւ ամեն ինչ ք՛ո հետ տարար. ես այս աւերակների վրայ ինչպէ՞ս թագաւորեմ:

Ասում են այս խօսքերի վրայ բռնում է Արտաշէսի ճայրը, որ ասում է.

— Երբ դու ձի հեծած, Ադամն Մասիս պնաս որսի, թո՛ղ, չար ոգիները բռնեն քեզ ու բռնատրկեն այնտեղ եւ դո՛ւ լո՛յս աչխարհ չտեսնես...

Արտաշէսի մահից յետոյ, երբ Արտաւազդը թագաւոր դարձաւ, վատարեց հօր անէծքը: Մի օր, երբ նա որսի էր պնացել իր ձիով ու որսի չներով, դէպքում է Մասիս խոր վիհը եւ անյայտանում:

Հայկական աւանդութիւնը ասում է մինչեւ այսօր էլ Արտաւազդը ապրում է քարայրում փակուած եւ երկաթէ չղթաներով կապուած: Նրա հաստատուն չներն անընդհատ

կրծում են իրենց ամբողջ չղթաները, որ մաշեցնեն դրանք, որպէսզի չար թագաւորն ազատուի եւ նոյն աշխարհն դուրս դայ: Այդ պատճառով էլ հայ դարբիններըը ամեն կիրակնամուտի, երբ աշխատանքը վերջացնում են, մուրճով մի քանի անգամ խփում են սալին, որպէսզի Արտաւազդի չղթաները ամրանան:

ԲԱՌԵՐ

Բարեգործ= *բարի գործեր կատարող*
Երկրագործութիւն= *հողագործութիւն*
Բազմութիւն= *շատ թւով մարդիկ*
Փող= *մի տեսակ նւագարան, շեփոր*
Աւերակ= *քար ու քանդ*
Վիհ= *շատ խոր փոս*
Դարբին= *երկաթագործ*
Սալ= *տափակ քար կամ երկաթ*

ՀԱՐՑԵՐ

1.— Ի՞նչ գործեր է կատարել Արտաշէսը:
2.— Ի՞նչ գիտէք հայոց թագաւորի թաղման մասին:
3.— Ի՞նչ ասաց Արտաւազդը իր հօր թաղման ժամանակ:
4.— Ի՞նչ դէպք պատահեց Արտաւազդի հետ:

ՔԱՐՏԷԶԻ ՎՐԱՅ ՅՈՅՅ ՏԻԼՔ

1- *Կուր գետը*
2- *Արաքս գետը*

15 ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ ԵՒ ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՅՍ

Այն ժամանակ երբ Յիսուս Քրիստոսը Հրէաստանում պբաղւած էր քրիստոնէութիւնը քարոզելով եւ հրաշքներ գործելով, Եդեսիա քաղաքում իշխում էր մի հայ թագաւոր՝ Աբգար անունով: Սա տանջւում էր անբուժելի հիւանդութիւնից: Լսելով Յիսուսի կատարած հրաշքների մասին, հիւանդ թագաւորը մի նամակ է գրում եւ խընդրում Յիսուսից գնալ Եդեսիա՝ իր ցաւերը բուժելու համար:


Քրիստոսը թովմաս առաքեալի միջոցով լուր է ուղարկում, որ ինքը չի կարող Աբգարի մօտ գնալ, բայց ժամանակին նրա մօտ կուղարկի իր աշակերտներից մէկին:

Յիսուսի համբարձւելուց յետոյ, նրա աշակերտներից Սուրբ Թադէոս Առաքեալը գնում է Եդեսիա, բուժում է Աբգարին եւ քրիստոնեայ մկրտում նրան: Ս. Թադէոս Առաքեալի միջոցով քրիստոնեայ են դառնում Եդեսիայի բոլոր բնակիչները:

Այնուհետեւ Ս. Թադէոսը մեկնում է Հայաստան եւ ակսում է քրիստոնէութիւն քարոզել հայոց երկրում: Կարճ ժամանակում մեծ թւով հայեր քրիստոնեայ են դառնում: Քրիստոսի լրօնը ընդունում են նոյնիսկ մի խումբ իշխանաւոր մարդիկ, դրանց շարքում նաեւ հայոց Սանատրուկ թագաւորի աղջիկը՝ Սանդուխտը: Նա մեր պատմութեան մէջ կոչւում է Սուրբ Սանդուխտ Կոյս:

Թագաւորն ու իր պալատականները ամէն կերպ աշխատում են ժողովրդին հեռու պահել քրիստոնէութիւնից եւ այդ պատճառով էլ դաժան միջոցներով չարչարում ու նահատակում էին հաւատացեալ քրիստոնեաներին:

Սանատրուկ թագաւորը շատ է աշխատում համոզել իր աղջկան, որ թողնի նոր լրօնը եւ վերադառնայ հեթա-



Աղոթք Աստծոյ կատսի հաճախականութեան

նոտութեան, սակայն չի յաջողում:

Թադէոսը քարկոծուելով հրամայում է սպանել թէ՛ Սուրբ Սանդուխտ կոյսին եւ թէ՛ Սուրբ Թադէոս Առաքեալին: Եւ նրանք նահատակւում են իրենց հաւատքի համար:

Հայաստանում քրիստոնէական կրօնը քարոզել է նաեւ Քրիստոսի աշակերտներից Սուրբ Բարդուղիմէոս Առաքեալը, որը նոյնպէս նահատակւել է հեթանոսների միջոցով:

Քանի որ քրիստոնէութիւնը Հայաստանում առաջին անգամ քարոզել է Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարդուղիմէոս առաքեալների միջոցով, այս պատճառով էլ հայոց եկեղեցին կոչւում է Հայաստանեայց Առաքելական եկեղեցի:

ԲԱՌԵՐ

Հրաշք= զարմանալի, ոչ–սովորական
Բուժել= բժշկել, առողջացնել
Նահատակւել= հաւատքի համար զոհւել
Հեթանոս= կռապաշտ

ՀԱՐՑԵՐ

1.— Ե՞րբ եւ որտե՞ղ էր իշխում Աբգար թագաւորը:
2.— Ինչո՞ւ է Աբգարը նամակ գրում Յիսուսին:
3.— Ո՞վ էր Ս. Սանդուխտ կոյսը եւ ինչո՞ւ նահատակւեց:
4.— Ի՞նչ գիտէք Ս. Թադէոս Առաքեալի կատարած գործերի մասին:
5.— Հայոց եկեղեցին ինչո՞ւ է կոչւում Հայաստանեայց Առաքելական եկեղեցի:

Հայոց ազանդական պատմութեան այս մասը, որ սովրեցինք, վերցուած է Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւն»-ից:

Մովսէս Խորենացին հայ նշանաւոր պատմագիրներից մէկն է: Նա ծնուել է հինգերորդ դարի սկզբին, Սիւնիքի Խորեան գիւղում, մի հասարակ գիւղացու ընտանիքում: Խորենացին եղել է հայոց տառերի հանճարեղ գիւտարար՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից: Ուշիմ եւ խելացի էր նա, ժամանակին կարդում է բազմաթիւ գրքեր եւ ձեռք է բերում շատ գիտելիքներ:

Մի քանի տարի Հայաստանում սովորելուց յետոյ, Սուրբ Մեսրոպն ու Սուրբ Սահակը նրան մի խումբ առաջադէմ աշակերտների հետ ուղարկում են Ալեքսանդրիա՝ բարձրագոյն ուսում առնելու:

Երբ այդ աշակերտները բարձր կրթութիւն ստացած, վերադառնում են Հայաստան, արդէն մեռել էին թէ՛ Սուրբ Մեսրոպը եւ թէ՛ Սուրբ Սահակը: Այդ մասին մեծ ցաւով է պատմում Խորենացին: Այնուհետեւ Խորենացին կեանքում շատ ճանապարհներ է կրում, բայց առանց յուսահատելու, յաղթահարում է բոլոր դժուարութիւնները եւ մեծ ծառայութիւններ է կատարում հայ ժողովրդին: Նա գրում է հայոց պատմութեան իր արժէքաւոր աշխատութիւնը, մի գիրք, որը դարեր շարունակ օգտագործել է ընթերցողը, եւ նրանից յետոյ եկող պատմագիրները մեծապէս օգտուել են այդ գրքից:

Մովսէս Խորենացին առաջին հայ պատմագիրն է, որ գրել է ամբողջական հայոց պատմութիւն, այսինքն՝ սկզբից մինչեւ իր օրերը: Նա իր պատմութեան գրքի մէջ գրի է առել բազմաթիւ ժողովրդական հեքիաթներ, զրոյցներ, երգեր եւ այնպիսի նիւթեր, որոնք կարդալո՛վ ծանօթանում ենք մեր պապերի կատարած գործերի եւ նր-



Մովսէս Խորենացի

բանց մտքերի մասին:

Այս բոլորը նա որպէս թանկագին պարգեւ յիշատակ է թողել մեզ, որպէսզի մենք եւս սիրենք ու պահպանենք ղրանք:

ԲԱՌԵՐ

Հանճարեղ = շատ բարձր շնորհք ունեցող
Գիւտարար = գիւտ անող
Գիւտ = գտնել, յայտնագործութիւն
Յաղթահարել = դժւարութիւնները վերացնել
Պարգեւ = բարիք, նւէր

ՀԱՐՑԵՐ

1.— Ե՞րբ եւ որտե՞ղ է ծնւել Մովսէս Խորենացին եւ ովքե՞ր են եղել նրա առաջին ուսուցիչները:
2.— Ի՞նչ գիտէք նշանաւոր պատմագրի ստացած կրթութեան մասին:
3.— Ի՞նչ նիւթերի մասին է գրել Մ. Խորենացին:
4.— Ինչպէս է օգտագործւել Խորենացու պատմութեան գիրքը:

ՔԱՐՏԷԶԻ ՎՐԱՅ ՅՈՅՅ ՏԻԷՔ

Սխնիքը



Illuminated Thurber

Բ. ՄԱՍ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ

17 ՋԱՐ ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ԾՈՎԻՆԱՐԻ ԵՐԱԶԸ

Շատ դարեր առաջ Միջագետքի Բաղդադ քաղաքում իշխում էր մի չար թագաւորը: Սա իր հպատակ աշխատաւորը ժողովրդից ծանր հարկեր էր դանձում, չարչարում եւ բանտարկում էր նրանց:

Այս չար թագաւորը մի օր մեծ զօրքով յարձակւում է Հայաստանի վրայ, քար ու քանդ է անում երկիրը եւ շատերին գերի առնում: Այդ գերիների մէջ էր նաեւ Հայոց Ծովինար իշխանուհին, որը շատ գեղեցիկ ու խելացի աղջիկ էր:

Ծովինարը գերի տարւելուց առաջ, Հայաստանի կաթնով Աղբիւրից ջուր է խմում, որի հետեւանքով էլ գերութեան մէջ նրանից ծնւում են երկու զաւակներ. մեծի անունը դնում է Սանասար, իսկ փոքրինը՝ Բաղդասար: Եղբայրները իրենց մօր մօտ մեծանում են որպէս քրիստոնեայ եւ չեն ուզում ենթարկւել կռապաշտ թագաւորին:

Բաղդադի թագաւորը երկրորդ անգամը լինելով, յարձակւում է Հայաստանի վրայ, բայց այս անգամ հայերը մխանջով իրար, քաջութեամբ կռւում են նրա դէմ, ջարդում նրա զօրքերին եւ թագաւորը հազիւ է կարողանում փախչել:

Փախչելու ժամանակ նա խոստանում է, որ եթէ ազատւի, Սանասարին ու Բաղդասարին մատաղ անի իր մեծ կռւռքին: Թագաւորը մի կերպ փրկւում է եւ հասնում իր երկիրը:

Այդ ժամանակ Ծովինարը երազում երկու ճրագ է տեսնում, որոնց լոյսը մօտենում է հանգչելուն, բայց յանկարծ նորից ճրագները փայլատակում են եւ մինչեւ երազի վերջը մնում են վառ:

Ծովինարը քնից արթնանալով, իր մօտ է կանչում

որդիներին եւ նրանց տեսնելով, լաց է լինում ու ասում.

– Այս գիշեր Սուրբ Կարապետը երազ եկաւ ինձ եւ ասաց, որ թագաւորը նեղութեան մէջ ընկնելով, խոստացել է ձեզ մատաղ անել իր մեծ կուռքին, – այնուհետեւ մայրը խորհուրդ է տալիս իր որդիներին, գնալ Հայաստան՝ իրենց պապի մօտ:

Սանահարը դառնալով Բաղդասարին ասում է.

– Գնանք եղբա՛յր, օտար հողը մեզ հայրենիքը չի դառնայ:

Այս խօսքերից յետոյ, երկու եղբայրը համբուրում են իրենց մօրը, հրաժեշտ տալիս նրան ու ճանապարհ-ւում:

ԲԱՌԵՐ

Փայլատակել= *յանկարծակի փայլ տալ, շողշողալ*
Հրաժեշտ տալ= *մնաք բարով ասել*

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ գործեր կատարեց Բաղդադի թագաւորը՝ Հայաստանի վրայ առաջին անգամ յարձակ-ւելուց յետոյ:
2. — Ի՞նչ պատահեց թագաւորի հետ, երկրորդ անգամ Հայաստան արշաւելիս:
3. — Ո՞վ էր Ծովինարը եւ ինչպէ՞ս մեծացան նրա որդիները:
4. — Ծովինարը ի՞նչ տեսաւ երազում:
5. — Ի՞նչ ասաց Սանասարը իր եղբօրը:

ՔԱՐՏԷԶԻ ՎՐԱՅ ՅՈՅՑ ՏԻԼՔ

Մէջագետքը



Արշաւանքի

18 ՀՐԱՇՔ ԱՂԲԻՒՐԸ

Սանասարն ու Բաղդասարը, սովորական ծնունդ չէին, այլ դիւցազուններ. դրա համար էլ նրանք միւս երեխաների համեմատութեամբ՝ աւելի արագ էին մեծանում: Սրանք դեռեւս փոքր տարիքից հսկայ ուժ ունէին:

Պատմում են, որ Սանասարը եօթ տարեկանում, խաղի ժամանակ բարկանում է եւ այնպէս խփում մի էշ-խանի տղայի, որի վիզը ծռւում է եւ այլեւս չի ուղղւում: Մի անգամ էլ, երբ դահիճը, Թագաւորի հրամանով ուզում է նրա գլուխը կտրել, ապտակ է զարկում եւ դահիճի գլուխը մարմնից թռցնում:

Ահա այսպիսի մեծ ուժի տէր էին Սանասարն ու Բաղդասարը, երբ դուրս եկան հայրենի քաղաքից ու ճանապարհ ելեցին դէպի Հայաստան:

Երկու եղբայրներ չորս օր ու գիշեր ճանապարհ են կտրում, մինչեւ հասնում են մի ձորի, որի միջով անցնում էր մի մեծ գետ. մօտակայ լեռներից մի փոքրիկ ու սրընթաց առու էր իջնում եւ զարկւում էր գետին, կըտրում, հասնում էր մինչեւ գետի մէջտեղը եւ ապա խառնըւում գետի ջրերին:

Սանասարը Բաղդասարին հարցնում է թէ սա ի՞նչ ջուր է. Բաղդասարը պատասխանում է.

– Սա Հրաշէք Աղբիւրի ջուրն է, ով որ այս աղբիւրի աւից ջուր խմի, այնպիսի կտրին ու դառնայ, որի մէջքը ոչ ոք գետին չի կարող տալ:

Սանասարն իր եղբօրն ասում է.

– Ուրեմն արի գնանք այդ աղբիւրի աւը գտնենք եւ մեր տունը հէնց այնտեղ կառուցենք, որպէսզի մեր զաւակներն էլ զօրեղ ու անյաղթ մարդիկ լինեն:

Նրանք առուն բռնում են ու գնում: Ճանապարհն անցնում էր բարձր սարերից, խոր-խոր ձորերից, քարքարոտ տեղերից եւ խիտ անտառներից, որտեղ տեսակ-

տեսակ զազաններ էլին ապրում: Երկու եղբայր դէշեր-ցեր-րեկ մէկ են անում, կտրում անցնում են երկար ու դժա-րին ճանապարհ, մինչեւ հասնում են աղբիւրի ակին: Ը-րանք պրչում են այդտեղ կառուցել իրենց տունը եւ ան-միջապէս անցնում են աշխատանքի:

Սանասարն ու Բաղդասարը սարերից մեծ-մեծ քա-րեր են բերում, տաշում, սարքում եւ իրար վրայ շարում ու այսպէս ծանր աշխատանքից յետոյ կառուցում ու վեր-ջացնում են իրենց տունը:

ԲԱՌԵՐ

Հրաշք= *զարմանալի, ոչ-սովորական որեւէ բան*
Դիւցազուն (դիւցազն)= *հերոս՝ աստուածների սերունդից*
Դահիճ= *մահապատիժ գործադրող պաշտօնեայ, մար-դասպան*
Սրընթաց= *արագօրէն գնացող*
Կտրիճ= *քաջ, խիզախ*
Աղբիւրի ակ= *աղբիւրի սկիզբը*

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչո՞ւ Սանասարն ու Բաղդասարը սովորա-կան երեխաներ չէին:
2.— Պատմեցէք մի դէպք Սանասարի մանկութիւ-նից:
3.— Բաղդասարը ի՞նչ բացատրութիւն է տալիս Հրաշք Աղբիւրի մասին:
4.— Ինչո՞ւ են Սանասարն ու Բաղդասարը իրենց տունը Հրաշք Աղբիւրի մօտ կառուցում:

19 ՍԱՍՈՒՆ

Երբ Սանասարն ու Բաղդասարը վերջացնում են իրենց կառուցման գործը, մտածում են բնակչութեամբ հետացնել այդ երկիրը: Դրա համար էլ գնում են Մանազկերտի չրջանից մեծ թուով ժողովուրդ են բերում: Սանասարն ու Բաղդասարը մտածում են նախ ժողովրդի համար տուն չինեն եւ յետոյ իրենց բերդը կառուցեն:

Այնուհետեւ գործի են անցնում: Պատմում են, որ նրանք չորս օր ու գիշեր քար են կրում, պատ են չարում, տներ չինում եւ տալիս ժողովրդին:

Դրանից յետոյ երկու եղբայր լեռներից մեծ – մեծ քարեր են բերում, հսկայ սիւներ բարձրացնում՝ մի մեծ բերդ ու եկեղեցի չինում:

Աշխատանքը վերջանալուց յետոյ, չատ են մտածում, բայց մի յարմար անուն չեն գտնում իրենց բերդի համար: Բաղդասարը եղբօրն առաջարկում է գնան մի ծեր եւ իմաստուն մարդ գտնեն ու բերեն բերդը ցոյց տան, որպէսզի մի յարմար անուն տայ դրան:

Սանասարը գնում, փնտրում ու գտնում է մի ապրատակամօրուք պապիկ եւ նրան բերում է իրենց տուն: Եղբայրները առաւօրէն հիւրասիրում են ծերունուն, ապա տանում են նրան ու ցոյց են տալիս իրենց հսկայ բերդը:

Ծերունին կանգնում է բերդի դիմաց, նայում է նայում, տեսնում է մեծամեծ քարեր, հսկայական սիւներ եւ զարմացած ասում է.

– Այսուամենայնիւ բարի տայ, բայց անուն տամ այս չէնքին: Դուք ինչքա՞ն ուժ ունէք, որ կարողացել էք այս սաստուն քարերը վերեւ տանել եւ սիւն-սիւնի վրայ դնել:

Սա տուն չէ, այլ սասուն է: Այդպիսով բերդի անունը դարձել Սասուն:*

Ժամանակի ընթացքում Սասունի բնակիչները բազմանում են եւ այդ երկրամասը դառնում է Հայաստանի կարեւոր չրջաններից մեկը:

ԲԱՌԵՐ

Բնակչութիւն= *որեւէ վայրում ապրող մարդկանց ամբողջութիւնը*

Շէնացնել= *մարդաբնակ դարձնել, կարգի բերել*

Իմաստուն= *շատ խելացի, շատ բան իմացող*

ՀԱՐՑԵՐ

1.— Ի՞նչ գործ են կատարում Սանասարն ու Բաղդասարը՝ ժողովրդին իրենց երկիրը բերելուց յետոյ:

2.— Ինչպե՞ս է կառուցւում Սասունի բերդը:

3.— Ինչպե՞ս է առաջացել Սասուն անունը:

ՔԱՐՏԷԶԻ ՎՐԱՅ ՅՈՅՑ ՏԻԼՔ

1– *Մանազկերտ քաղաքը*

2– *Սասունը*

---

* *Սասուն* անունը առաջացել է *սասում* բառից, որը նշանակում է Աստծու բարկութիւն *(ցասում)*: Ծնուածից երբ ասում է՝ «Սա տուն չէ, այլ սասուն է», նպատակն այն է, որ դա սովորական ձեւով կառուցուած տուն չէ, այլ՝ գերբնական շինուածք,

20 ՍԱՆԱՍԱՐԸ ՏԻՐԱՆՈՒՄ Է ԹՈՒՐ ԿԱՅԾԱԿԻԻՆ ԵՒ ՀՐԵՂԷՆ ՁԻՈՒՆ

Սանասար թերզը կառուցելուց յետոյ, երկու եղբայրները ակռում են իրենց դրծերով զբաղվել: Ձերեկնեբը նրանք որի էին գնում մինչեւ ծովափ եւ երեկոյան տուն էին վերադառնում:

Մի օր Սանասարն ասում է իր եղբօրը.

– Բաղդասա՛ր, արի՛ գնանք մի լաւ ձի գտնենք մեզ համար:

Եւ որովհետեւ նրանք ջրածին էին, դրա համար էլ գիտէին, որ ծովում հրեղէն ձի կայ:

Եղբայրները գնում, հասնում են ծովի ափը: Սանասարը եղբօրն առաջարկում է ծով մտնել, Բաղդասարը չի համաձայնւում: Այդ տեսնելով, Սանասարն Աստծու անունը տալիս է ու ծովն է նետւում:

Այդ րոպէին, Աստծու հրամանով ծովի ջուրն երկու մասի է բաժանւում եւ Սանասարը տեսնում է մի ցամաք: Նա առաջ է գնում եւ հասնում է մի պեղեցիկ պարտէզի, որի մէջ մի չքնեղ պալատ կար, իսկ դրա մօտ մի ուռազան: Սանասարը տեսնում է թամբած ու պատրաստ ծովային ձիուն, որի վրայ կախւած էր Թուր կայծակին:

Ասպանից ոչ հեռու մի եկեղեցի կար: Սանասարը ներս է մտնում այդ եկեղեցին, որտեղ եւ քունը տանում է ու քնում: Երազում գալիս է Մարիամ Աստուածածինը եւ նրան ասում է.

– Սանասա՛ր, վեր կա՛ց, այստեղ է նաչ-պատերազմին, վերցրու այն, կապի՛ր ալ թեւիդ, նա կազատի քեզ թշնամու զարկից: Ձեզ են սպասում ծովային ձին՝ Քուռկիկ Ջալալին եւ երկնքից իջած՝ Թուր կայծակին: Այստեղ գտնուղ սահարանում, դրւած են զրահ, գուրզ եւ այլ զէնքերը: Գնա՛, ըղացի՛ր ուռազանում, եօթն անգամ կուժեղանաս ու կը մեծանաս, դրանից յետոյ այդ բոլորը քոնը կը լինի:

Սանասարն արթնանում է քնից· լողանում է պար-


ահկի աւազանում, հագնում է զրահը, մէջքին է կապում թուր կայծակին եւ թռչում է հրեղէն ձիու վրայ: Այդ ժամանակ ձին չի "ւզում ենթարկուել, բայց երբ հասկանում է, որ իրեն հեծած ձիաւորը մի զիւցազն է, հնազանդւում է նրան: Սանասարը եւ Բուռլիկի Ջալալին պատրաստ են դալիս ծովից:

ԲԱՌԵՐ

Հրեղէն= *կրակից բաղկացած*
Հրեղէն ձի= *կրակի պէս թռչող ձի*
Համարձակուել= *վստահութիւն ունենալ, քաջութիւն ունենալ*
Չի համարձակւում= *քաջութիւն չի ունենում*
Յամառ= *հոր վայր*
Թամբ= *ձիու մէջքին զնում նստելու յարմարանք*

ՀԱՐՑԵՐ

1.— Ի՞նչ է տեսնում Սանասարը ծով ննջուելուց յետոյ:
2.— Սանասարը երազում ի՞նչ է տեսնում:
3.— Ի՞նչ է անում Սանասարը քնից արթնանալուց յետոյ:



21 ՍԱՆԱՍԱՐՆ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐԸ ԱԶԱՏՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՄՕՐԸ

Երբ Սանասարը դուրս է գալիս ծովից, Բաղդասարը չի ճանաչում եղբորը, որովհետեւ շատ էր մեծացել եւ կերպարանափոխվել, այդ պատճառով էլ վախենում է նրանից: Սանասարը հանգստացնելով եղբորը, պատմում է իր դժխեմ եկածը, ապա միասին տուն են դնում:

Այդ դեպքից անցնում է մի ամիս: Ամբողջ ժամանակ Բաղդասարը տխուր մտքերի մեջ էր եւ օր-օրի նիհարում էր ու նվազում: Երբ Սանասարը հարցնում է եղբոր անհանգստութեան պատճառը, Բաղդասարն ասում է, որ դիշերները խառն երազներ է տեսնում եւ մտածում է, չլինի թէ իրենց մայրը նեղութեան մէջ է:

Ախոռհետեւ եղբայրները իրենց մօրը դերութենից ազատելու նպատակով մեկնում են Բաղդադ:

Երբ Բաղդադի խալիֆան տեսնում է նրանց, շատ է ուրախանում ,որովհետեւ մտածում է անմիջապէս նրանց մատաղ անել մեծ կուռքին: Խալիֆան իր մտադրութիւնը յայտնում է նրանց եւ որոշում է, որ այդ մատաղը մեծ բազմութեան ներկայութեամբ կատարւի:

Եղբայրները հեռանալով պալատից, սկսում են մտածել իրենց անելիքի մասին: Սանասարը յայտնում է, որ ինքը մենակ կը մնայ խալիֆայի մօտ, իսկ Բաղդասարը ձին վերցնելով՝ հեռանայ պալատից եւ սպասի իր կանչին:

Դրանից յետոյ Սանասարը գնում է խալիֆայի մօտ եւ երբ սա ուզում է մատաղ անել քաջին, Սանասարը մի ճարպիկ չարժումով սպանում է դաժան խալիֆային: Պալատից դուրս գալիս, նա հանդիպում է խալիֆայի հսկայ բանակին: Այդ ժամանակ Սանասարը ձայն է տալիս եղբօրը: Բաղդասարը Քուռկիկ Ջալալիի հետ անմիջապէս իրեն հասցնում է եւ մխասին սկսում են կռւել թշնամու զօրքերի դէմ:

Սանասարը Քուռկիկ Ջալալին հեծած՝ թռւր կայ-



Սանասար եւ Բաղդասար

ծակիով ջարդում է թշնամիներին: Բաղդասարը նոյնպէս մեծ քաջագործութիւններ է անում:

Երանք թշնամուն յաղթելուց եւ վախցնելուց յետոյ, դնում են իրենց մօր մօտ:

Ծովինարը, երբ տեսնում է նրանց եւ լսում է խաբկիթայի սպանելու մասին, շատ է ուրախանում եւ փառք է տալիս Աստծուն, որ ազատուել են այդ բռնակալից:

ԲԱՌԵՐ

կերպարանափոխել= *դէմքն ու մարմինը փոխել*

Մտաղրութիւն= *մտքում որոշած որեւէ բան*

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչո՞ւ էր Բաղդասարը տխրում ու նւազում:

2.— Ի՞նչ էր մտածում Բաղդադի խալիփան երկու եղբօր համար:

3.— Եղբայրները ի՞նչ նպատակով էին Բաղդադ գնացել:

4.— Սանասարն ու Բաղդասարը ինչպէ՞ս են վարուում խալիփայի եւ նրա զօրքերի հետ:

22 ՍԱՆԱՍԱՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Ծովինարն ու զաւակները Բաղդադից գնում են Հայաստան՝ Ծերունի Գագիկ Թագաւորի մօտ: Ծեր Թագաւորը նրանց տեսնելով, շատ է ուրախանում, չքեղ հանդէսներ է կազմակերպում իր աղջկայ եւ քոյր Թոռների պատուին:

Մի առ ժամանակ պապի մօտ մնալուց յետոյ, Սանասարն ու Բաղդասարը, երենց մօր հետ վերադառնում են Սասուն:

Երկու եղբայրները, իրար օգնութեամբ չէնացնում են Սասունը, ընդարձակում են երկրի սահմանները եւ սասունցիների համար ստեղծում են խաղաղ ու ապահով կեանք: Սասունում բնակիչներից հարկ չէին հաւաքում:

Լսելով այս բոլորի մասին, զանազան կողմերից ընկըսում են մեծ թուով մարդիկ գալ եւ բնակութիւն հաստատել Սասունում: Կարճ ժամանակից յետոյ Սասունը դառնում է մի հզօր եւ բազմամարդ երկիր:

Սանասարի ու Բաղդասարի քաջագործութիւնների եւ կատարած չինարարական գործերի մասին խօսում է ամէն տեղ եւ նրանց հռչակը հասնում է Պղնձէ ֆաղաֆի Թագաւորի աղջկան՝ Քառասուն-հուղ-ծամիճ: Սա երազում տեսնում է քոյր Սանասարին եւ հաւանում է նրան: Այնուհետեւ Քառասուն-ճուղ-ծամը մի դեղեցիկ նամակ է գրում ու նրան իր մօտ հրաւիրում:

Սանասարը այդ նամակը առանալով, գնում է Պղնձէ քաղաքը: Այս քաղաքի Թագաւորը իր աղջկայ ուղողներին առաջարկում էր մի շարք դժուարին քաջագործութիւններ անել: Մինչեւ այդ ժամանակ ոչ ոք չէր կարողացել կատարել Թագաւորի պահանջածը:

Սանասարը մեծ քաջութեամբ կատարում է այդ բոլորը, ինչ առաջարկուում է երեն եւ ամուսնանում է Քառասուն-ճուղ-ծամի հետ: Հարսանիքից յետոյ նրանք



Սանասարը Պղնձէ բաղարջում

դալխա են Սասուն:

Այդ ընթացքում ամուսնանում է նաեւ Բաղդասարը եւ իր կնոջ հետ գնում է Բաղդատ, ուր եւ երկար տարիներ ապրելով մեռնում է անզաւակ:

ԲԱՌԵՐ

կազմակերպել= *մի որեւէ նպատակի համար իրար շուրջ հաւաքել, մի բան առաջացնել, ստեղծել*

Ապահով= *անվտանգ, հանգիստ*

ՀԱՐՑԵՐ

1.— Ի՞նչ է անում Գագիկ թագաւորը, երբ տեսնում է իր աղջկան եւ թոռներին:

2.— Ինչո՞ւ է Սասունը դառնում մի հզօր եւ բազմամարդ երկիր:

3.— Ինչպէ՞ս է ամուսնանում Սաֆասարը:

4.— Ի՞նչ գիտէք Բաղդասարի ամուսնութեան եւ մահուան մասին:



23 ԱՆԱՍԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ ԵՒ ՄԵԾ ՄՀԵՐԸ

Սանասարը երկար տարիներ խաղաղութեամբ ու արդարութեամբ կառավարեց Սասունը եւ մեռաւ խոր ծերութեան մէջ. նրանից առաջ մեռել էր նաեւ Ծովինարը:

Սանասարը երեք որդի ունէր. Մեծի անունը Վերգօ էր. սա մի վախկոտ ու թոյլ մարդ էր: Միջնակը կոչւում էր Զէյնվ. Օհան, սրա մասին պատմում էին թէ այնքան բարձր ձայն ունէը, որ երբ ուզում էր մէկին կանչել, եօթը գոմէշի կաշի էր վարթաթում մէջքին, որպէսզի փորը չպատռւի: Սրանց փոքր եղբօր Միհեր էին ասում, որը քաջ ու անվախ տղայ էր:

Սանասարը, երբ զգում է, որ մօտեցել է իր մահը, որդիներին իր մօտ է կանչում եւ ասում.


– Իմ մահից յետոյ, ձեզ է մնում մեր երկրի եւ ժողովրդի պաշտպանութիւնը: Թշնամու հետ չվարւեք նենգութեամբ, այլ կռւեցէ՛ք սասունցի քաջի նման: Ձեր խօսքի տէրը եղէ՛ք: Կռւի եւ նեղութեան ժամանակ յիշեցէ՛ք Սաչ-Պատերազմին: Ձեզ եմ յանձնում նաեւ թռւր Կայծակին եւ Քուռկիկ Ջալալին:

Սանասարի մահից յետոյ, նրա երեք որդիներից Մհերը աչքի է ընկնում իր հսկայական ուժով եւ կատարած քաջագործութիւններով:

Մհերը հսկայ տանտիրոջ տարեկան էր, որ Սասունում ապրում է տարածւում: Մարդիկ մեռնում էին սովից: Ժողովուրդը հաւաքւում է Մհերի դռանը եւ ուզում է, որ Մհերը մի ճար անի:

Այդ ժամանակ մի հսկայ առւծ էր եկել Սասուն, մարդիկ այդ սարսափելի կենդանու վախից տներից դուրս չէին գալիս՝ վար ու ցանք անելու եւ սովը այդ պատճառով էր առաջացել: Մհերը չուռով հասկանում է այդ եւ որոշում է մենակ գնալ առւծին սպանելու:

Նա առւծին հանդիպում է մի ընդարձակ դաշ-



Մահերը կռռում է աուիծի հետ

տում: Առիւծը սոսկալի ձայնով մռնչում է եւ յարձակուում: Մհերը պատրաստ է դաշանի վրայ, ալ ոտքը դնում է նրա մէջքին եւ երկու ձեռքով բռնելով առիւծի յածի եւ վերին ծնօտներից, ուժով քաշում է ու երկու մասի բաժանում նրան:

Այս պէսքից յետոյ նրան կոչում են Առիւծ Մհեր: Եղբ Մհերը դնում է մօր մօտ, Քառասուն-ճուղ-ծամը, ոլը լսել էր "ղու քալպուծուվեան մասին, նրան է յանձնում թուր կայծակին եւ Քուռկիկ Ջալալին:

Առիւծ Մհերի վախից թշնամիները մօտ չէին գալիս հայոց երկրին: Եւ այսպէս քառասուն տարի նա խաղաղ է Սասունի վրայ:

ԲԱՌԵՐ

Անոելի= *սարսափ առաջացնող*
Յատկել= *թռչել*
Ծնօտ= *դէմքի այն մասը, որտեղ գտնուում են վերին եւ ներքին ատամները:*

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչ գիտէք Սանասարի որդիների մասին:
2.— Մեռնելուց առաջ Սանասարը ինչ ասաց էր որդիներին:
3.— Ինչու էր Սասունցուն սոյ տարածել:
4.— Ինչու էին Սանասարի փոքր տղայից Առիւծ Մհեր ասում:



24 ԵՍ ԳԵՐԻ ՉԵՄ ԴԱՌՆԱՅ ԵՐԲԵՔ

Առիւծ Մհերը մինչեւ խոր ծերութիւն ապրեց անդաւակ եւ այդ պատճառով էլ մինչեւ ախուր էր, որովհետեւ մտածում էր չկայ մեկը, որ իրենից յետոյ երկիրը կառավարի:

Վերջապէս կատարուեց Մհերի տարիների ցանկութիւնը և Աստուած նրան ու իր կնոջը մի տղայ զաւակ պարգեւեց: Ուրախացին կնոքեցին եւ անունը դրեցին Դաւիթ, բայց նոյն օրը մեռան նրա հայրն ու մայրը:

Չէնով Օհանը որբ Դաւթին վերցրեց իր մօտ՝ պահելու համար:

Այդ ժամանակ Մարայ երկրի թագաւորը Մելիքն էր, որը չար եւ դաժան մարդ էր: Սա երբ լսում է թէ Մհերի մահից յետոյ Սասունն անտէր է մնացել, մեծ զօրքի գլուխ անցած գալիս է Սասունի վրայ:

Չէնով Օհանը սարսափահար գնում է Մարայ Մելիքի մօտ եւ խնդրում է նրան, որ քար ու քանդ չանի հայոց երկիրը, դրա փոխարէն՝ խոստանում է վճարել թագաւորի ուզած հարկն ու տուրքը եւ դառնալ նրա խոնարհ հպատակը:

Չէնով Օհանը գնում է եւ մեծ նեղութեամբ Սասունի ամբողջ ժողովրդին հաւաքում, բերում ու անցկացնել է տալիս Մելիքի արեւ տակով: Միայն Դաւիթը մօտ չի գալիս թշնամու սրին:

Նա կանգնում է Մելիքի դիմաց եւ ասում է.

_ Ես գերի չեմ դառնայ երբեք. ես Առիւծ Մհերի զաւակն եմ եւ Սասունի ժառանգը:

Մելիքի մարդիկ բռնում են Դաւթին, որ ուժով տանեն, քայլ սասունցին թափ է տալիս իրեն եւ նրանց չպղտոտում է դէս ու դէն: Դաւթի ճկոյթը դիպչում է մի քարի եւ այդ քարից կայծ է դուրս թռչում:

Կատաղած Մելիքը ուզում է տեղն ու տեղը սպանել



Սասունցի Դաւիթը եւ Քուռկիկ Ջալալից

Դաւթին, սակայն նրա մարդիկ ասում են՝ հիմա որ ամբողջ Սասունը Մսրայ թագաւորի արեւ տակ է, մի փոքրիկ երեխայ, տեղով կրակ էլ դառնայ, ոչինչ չի կարող անել:

Եւ իսկապէս այդ ժամանակ Դաւիթը ևօթ – ուվ տարեկան մի մանուկ էր:

ԲԱՌԵՐ

Խոնարհ= *ներքարկւող, հնազանդ*
Կատաղել= *սաստիկ բարկանալ*

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչ ցնակութիւն ունէր Առիւծ Միհրը իր կեանքի վերջին օրերին եւ ինչպէ՞ս կատարուեց նրա ցանկութիւնը:
2.— Ինչո՞ւ է Մսրայ Մելիքը յարձակւում Սասունի վրայ:
3.— Մսրայ թագաւորի յարձակման ժամանակ ի՞նչ է անում Ջէնով Օհանը:
4.— Ինչ է ասում մանուկ Դաւիթը եւ ինչպէ՞ս է վարւում Մելիքի մարդկանց հետ:
5.— Ինչո՞ւ Մելիքը չի փորձում սպանել Դաւթին:



25 ԴԱՒԻԹԸ ԳԱՌՆԱՐԱԾ ԵՒ ՆԱԽՐԱՊԱՆ

Զէնոպ Օհանի չար կինը ժիժո էր, որ Դաւիթը սպրծում է իրենց տանը եւ ամուսնուն չարունակ ստիպում էր, որ նրան տանի ու մի դրծի դնի ու ճանապարհի:

Մի օր Զէնոպ Օհանը մի դրդ երկաթէ կօշիկ ու մի մահակ է քերում, տալիս Դաւթին ու ասում նրան, որ վերցնի դրանք եւ դնայ լեռներում գառնարածութիւն անի:

Դաւիթը գառներն ու ուլերը հաւաքում ու քարձրանում է Սասնայ աննման լեռները: Սարերը քարձրանալիս ձայն է տալիս.

– Հէյ ջան սարե՛ր, Սասնայ սարե՛ր ...

Դաւթի ուժեղ ձայնից թռնդում են սար ու ձոր եւ վայրի գազանները՝ սարսափահար դուրս են թափւում իրենց քներից: Դաւիթը ընկնում է դրանց յետեւից, հօտը ցրւում է ամէն կողմ: Նա սարից ու ձորից հաւաքում է նապաստակ, աղւէս, եղնիկ, գայլ, խառնում է գառներին եւ ուլերին ու այդպէս բոլոր կենդանիներին քշում, քերում է քաղաք:

Մարդիկ այս տեսնելով՝ վախչում, մտնում են իրենց տները: Դաւիթը կանգնում է հրապարակում եւ կանչում է մարդկանց, որ գան իրենց գառներին ու ուլերին տանեն:

Նա երկար է սպասում, բայց ո՛չ ոք չի գալիս: Սպասելուց ձանձրացած, գլուխը դնում է մի քարի եւ քնում մինչեւ լուսաբաց:

Միւս օրը մարդիկ գնում են Զէնոպ Օհանի մօտ եւ դանդաղում՝ Դաւթի այդ արարքից:

Այս անգամ էլ կումեր ու եղներ է տանում արածեցնելու: Սարերում նորից կանչում է քարձրաձայն: Նրա ձայնից իրենց որջերից դուրս են թափւում առիւծ, արջ ու վագր եւ ընկնում են սար ու ձոր: Դաւիթը նրանց հաւաքում ու խառնում է նախորդին եւ այդպէս բոլոր կենդանիներին քերում է քաղաք: Քաղաքացիք մի անգամ եւս վախե-

Գազանները հաղաբում

ցած, բան ու գործ թողած վախչում, վազում են երևից անհետում:

Դաւիթը գալիս, նրանց կանգնում է հրապարակում և կանչում է մարդկանց, որ գան երևոյ անառաւնները տանեն. երբ ոչ ոք անից դուրս չի գալիս, կարծում է թէ մարդիկ քնել են, ինքն էլ հէնց այդտեղ պառկում է ու քնում:

Քաղաքացիները այս անգամ էլ են գնում Չէնով Օհանի մօտ և նրանից խնդրում, որ երևոյ տգեղ այս տարօրինակ նախրապանից, որը դաշտը ընտանի կենդանիներից չի ազատում:

ԲԱՌԵՐ

Մաճակ= *հաստ ձեռնափայտ*

Հրապարակ= *շէնքերի և փողոցների միջև ընկած ընդարձակ տարածութիւն*

Զանգրանալ= *Մի բանի կրկնելուց կամ երկար սպասելուց յոգնել*

Արարք= *արած՝ կատարած գործ*

Նախիր= *կովերի և եղների խումբ*

Նախրապան= *Նախիրը արածեցնող մարդ*

Ոջիլ= *գազանների բոյն*

Զանազանել= *տարբերել, տարբերութիւնը ղգալ*

Տարօրինակ= *ոչ սովորական, զարմանալի*

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչո՞ւ է Չէնով Օհանը Դաւթին գառնարածուբեաց տալիս:

2.— Ինչո՞ւ են գազանները իրենց բնութից փախչում:

3.— Ինչո՞ւ են Քաղաքի մարդիկ Չէնով Օհանի մօտ Դաւթից գանգատւում:

26 ԴԱՒԻԹԸ ՎԵՐԱՇԻՆՈՒՄ Է ՀՕՐ ՎԱՆՔԸ

Զէննով Օհանը մնացել էր չարած եւ չգիտէր ի՞նչ անել: Դաւթի սիրտը չկոտրելու համար, մի նետ ապնել տալով նրան, պատւիրեց որ դնայ որսորդութիւն անի:

Դաւիթը նետ ու աղեղը վերցրած, ցերեկները արտերի մէջ լոր ու ճնճղուկ էր որսում, իսկ դիշերները քնում մի աղքատ պառաւ կնոջ խրճիթում:

Մի օր էլ պառաւը բարկանալով Դաւթի վրայ աւում է, թէ ի՞նչ է իր կրծկի արտր ոսկի տակ տալիս ու փչացնում, թո՛ղ նետ-աղեղը վերցնի, եւ իր տուած հօր նման դնայ Ծովաւարում որս անի:

Այս խօսքի վրայ Դաւիթը գնում է իր հօրեղբօր մօտ եւ հարցնում այն աղբի տեղը, ուր իր հայրը որս էր անում:

Զէննով Օհանը պատասխանում է, թէ Աւուց Մհերի մահից յետոյ, Մսրայ Մելիքը խլել է Ծովաւարն ու հայոց երկիրը քար ու քանդ է արել. նա խորհուրդ է տալիս այդ մասին չխօսել, որովհետեւ եթէ Մսրայ թագաւորը լսի, կը բարկանայ իրենց վրայ:

Դաւիթը ասում է, թէ Մսրայ թագաւորը իրենց ոչինչ չի կարող անել, նա պէտք է իր երկրում մնայ, ի՞նչ պրծ ունի հայոց լեռներում: Այնուհետեւ Դաւիթը առնում է հօրեղբօրը՝ միասին Ծովաւար դնալ:

Զէննով Օհանը տեսնելով, որ չի կարողանում համոզել Դաւթին, ճարահատուած նրա հետ ճանապարհւում է դէպի Ծովաւար:

Հասնելով աղբի բարձունքին, հանդիպում են ջարդուած ու ոտնակոխ եղած անտառին եւ քանդուած պարիսպներին: Իսկ երբ աւելի առաջ են գնում, տեսնում են, որ Մարութայ սարի վանքն էլ աւերուած է:

Դաւիթը նայում է այդ տխուր տեսարանին եւ յուզուած իր հօրեղբօրն ասում է, միեւնոյն ժամանակ իր հօր վանքը չէր-



Դաւիթը վերաշինում է հօր վանքը

վերաշինի, սարից չի իջնի:

Դրանից յետոյ Զէնով Օհանը գնում է Սասուն եւ Դաւթի որոշումը յայտնում է ժողովրդին: Ժողովուրդը ապրի լսելով, շատ է ուրախանում, որովհետեւ հասկանում է, որ Սասունը այլեւս անառիկ չի մնալու:

Հազարաւոր բանուորներ ու մարդկանցեր բարձրանում են Մարութայ սարը եւ Դաւթի հետ միասին վերակենդանացնում են Մարութայ սարի Տիրամօր վանքը: Գործը աւարտելուց յետոյ Դաւիթը իջնում է սարից:

ԲԱՌԵՐ

խորհուրդ տալ= *խրատել*
ոտնակոխ= *ոտքի տակ տրորուած*
պարիսպ= *բարձր եւ հաստ պատ*
յուզել= *սիրտը լցնել, վշտանալ*
վերաշինել= *նորից կառուցել*

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչո՞վ էր զբաղուած Դաւիթը եւ պառաւը ի՞նչ է ասում նրան:
2.— Զէնով Օհանը ի՞նչ խորհուրդ է տալիս Դաւթին:
3.— Ի՞նչ է տեսնում Դաւիթը Ծովասարում:
4.— Դաւիթը Ծովասարում ի՞նչ գործով է զբաղուում:

27 ԴԱՒԻԹԸ ԻՐ ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Երբ Մարայ Մելիքը լսում է, որ Մհերի որդի՝ Դաւիթը, վերադարձել է Սասնայ իշխան եւ այլեւս չի ուզում հարկ վճարել իրեն, զայրացած կանչում է իր զօրավարներին եւ հրամայում, որ գընան Սասունն աւերեն եւ հօթը տարեայ հարկը գանձեն ու բերեն: Զար թագաւորը իր մարդկանց հրամայում է, հարկից բացի նաեւ քառասուն բեռ ոսկի եւ մեծ թուով կին ու աղջիկ գերի վերցնեն եւ բերեն:

Մարայ զօրավարներից Կոզբադինը մեծ զօրքի գլուխն անցած, ճանապարհւում է դէպի Սասուն:

Ջէնով Օհանը տեսնելով Մարայ Մելիքի անհամար զօրքերը, սարսափահար գնում է Կոզբադինի մօտ եւ խնդրում է, որ խնայի Սասունի ժողովրդին եւ չկոտորի նրանց. դրա փոխարէն խոստանում է նրան տալ ինչ որ ցանկանայ:

Այնուհետեւ Օհանը ահագին ոսկի եւ մեծ թուով գերիներ է բերում ու յանձնում Կոզբադինին:

Երբ Դաւիթը լսում է այս բոլորի մասին, չտալով վազում է տուն եւ ի՛նչ է տեսնում... Կոզբադինն ու նրա մարդիկ տանը նստած, չարչում են ոսկիները, իսկ Ջէնով Օհանն էլ՝ ձեռքերը կրծքին ծալած, անկիւնում կանգնած, խեղճ-խեղճ նայում է նրանց:

Դաւիթն էլ չի համբերում, աչքերը արիւնով են լցւում. կանդնում է հարկահաւաքների դէմ եւ պոռում նրանց երեսին.

— Վեր կա՛յ Կոզբադին, հեռացի՛ր այստեղից, իմ հօր ոսկին՝ միայն ես պիտի չափեմ:

Կոզբադինը Ջէնով Օհանին հասկացնում է, որ եթէ որչափ հարկը չտան, կր գնայ եւ Մարայ Մելիքին կը յայտնի, իսկ Մելիքը անհամար զօրքով կր գայ եւ հայոց երկիրը տակն ու վրայ կանի:

Դաւիթը վեր է թռչում տեղից եւ բարկացած ասում.

— Կորէ՛ք այսահղից անամօթնե՛ր, մեզ մեռա՞ծ էք կարծում, ինչ է... Միթէ չէ՞ք ճանաչում Սասնայ քաջերին:

Այդ ասելով, Դաւիթը կողբադինի ձեռքից խլում է չափը եւ դրանով խփում, ջարդում նրա դլուխը:

Պատմում են, որ չափի կտրները պատը ծակում են, անցնում եւ մինչեւ օրս էլ դեռ դնում են ...

Այդ դէպքից յետոյ, Մելիքի զօրքերը թողնում են Սասունն ու փախչում:

Այսպէս պարտուած ու ջարդուած, դնում հասնում են իրենց երկիրը: Մարայ կանայք ու աղջիկները հեռուից տեսնելով զօրքերին, կարծում են թէ նրանք յաղթելով հայերին, հսկայ հարստութիւն են բերում, ուրախութիւնից սկսում են պարել, երգել ու պմպել նրանց: Սակայն երբ զօրքը մօտենում է եւ տեսնում են նրանց վիճակը, սկսում են ծաղրական խօսքեր ասել:

Կողբադինը խիստ չդայնացած ասում է.

— Դուք դեռ չէք ճանաչում սասունցիներին եւ չէք լսել նրանց քաջութեան մասին: Սրանց քարքարոտ երկրի մարդկանց նետերը մի-մի դերաններ են:

Այդ խօսքերից յետոյ, կողբադինը գնում է Մարայ Մելիքի պալատը:

ՀԱՐՑԵՐ

1.— Ինչո՞ւ է Մարայ Մելիքը կոզբադինին Սասուն ուղարկում:

2.— Ի՞նչ է ասում Ջէնով Օհանը, երբ հանդիպում է կոզբադինին:

3.— Ի՞նչ է ասում Ջէնով Օհանը, երբ հանդիպում է կոզբադինին:

4.— Ինչպէ՞ս է վարւում Սասունցի Դաւիթը Մարայ Մելիքի զօրավարի հետ:

5.— Ինչո՞ւ են Մարայ երկրի կանայք ու աղջիկները իրենց զինուորներին ծաղրում:

Գայթակղեցուցիչ ծառի պտուղները. Հրեշտակները ծառի տակ հավաքում են պտուղները – Հին Կտակարան

28 ՀԱՅ ՀԵՐՈՍԸ ՔՍԶ Է ՈՒ ԱԶՆԻՒ

Կոզբատինը արիւնլայ ու դատարկաճեռն գնում է Մարայ Մելիքի մօտ: Սա երբ հարցնում է նրա բերած ոսկինների եւ գերինների մասին, կոզբատինը մինչեւ գետնի խոնարհւելով, պատմում է իր գլխին եկածը:

Բռնակալ թագաւորը լսելով այդ բոլորը, չատ է բարկանում եւ այդպէս վրդոված ու կատաղած, տեղից ցատկելով, հրամայում է.

— Կանչեցէ՛ք իմ բոլոր զինուորներին, հաւաքեցէ՛ք հազար հազարներով մանուկ, պատանի, երիտասարդ ու ծեր մարդիկ. թո՛ղէ՛ք նրանք գան ու հագնեն զէնք ու զրահ, որպէսզի գնանք Դաւթի դէմ կռւելու եւ Սասունն առնելու:

Այդ խօսքերից յետոյ, Մարայ Մելիքը բազմահազար զօրքով չարժւում է դէպի Սասուն եւ գալիս, բանակ է դնում հայոց երկրի սահմանում, Բաթմանի գետի ափին: Պատմում են, որ Մարայ անհամար զօրքը խմում է գետի ջուրը եւ ցամաքեցնում այն:

Սասունում մարդիկ ծարաւ են մնում: Ջէնով Օհանոր այս բանի պատճառն իմանալու համար՝ բարձրանում է սարի գագաթը եւ ի՛նչ տեսնի ... ամբողջ դաշտը ծածկւել էր Մարայ զինուորների ապխտակ վրաններով, այնպէս որ հեռւից, կարծես ձիւն իջած լինէր դաշտին: Սասնահայր իջնում է սարից, մոնում տուն եւ սկսում դոռալ.

— Վա՛յ, փախէ՛ք, փախէ՛ք, Մարայ Մելիքը անհամար զօրքով եկել է, չուտ եկէք ոսկի եւ գերիներ տանենք նրա համար եւ ազատենք, պատառենք, որ մեզ խրդճայ ու չկոտրի:

Այդ ժամանակ Դաւիթն ասում է.

— Դու կաց, հօրեղբա՛յր, դու մի՛ վախեցրա՛յ, գնա՛ հանգիստ թող համար քնի՛ր, ես կր գնամ եւ Մարայ Մելիքի գլուխը կր տամ:

Այնուհետեւ Դաւիթը հօրեղբօրից վերցնում եւ հագնում է իր հօր զէնքն ու զրահը, մէջքին կապում է թուր կայծակին, աջ ձեռքին՝ նաչ Պատերազմին, հեծնում է Քուռկիկ Ջալալին, բարձրանում է սարի գագաթին ու դիմելով Մսրայ զօրքին՝ բարձր ձայնով կանչում է.

– Ով քնած է թո՛ղ արթնանայ, ով արթուն է սաքի կանգնի, իր զէնքը վերցնի ու ձի հեծնի եւ պատրաստուի կռւի համար ... Յետոյ չասէք, քնած էինք ու Դաւիթը գողի նման գագանի յարձակուեց մեր վրայ:

Այս խօսքերից յետոյ, Դաւիթը ձին հեծած, նետուում է թշնամու զօրքերի վրայ:

ԲԱՌԵՐ

Բանակ դնել= *զօրքը որեւէ վայրում դասաւորել*
Պաղատել= *խնդրել, աղերսել.*
Անհամար= *անթիւ, շատ*
Կոտորել= *ջարդել, սպանել*
Նետուել= *թռչել դէպի մի բան, յարձակուել*

ՀԱՐՑԵՐ

1.— Ի՞նչ է ասում Մսրայ Մելիքը, երբ լսում է կոզբադիճի խօսքերը:
2.— Ինչո՞ւ է Բաթմանց գետը ցամաքում:
3.— Ի՞նչ է անում Ջէնով Օհանը՝ Մսրայ բանակները տեսնելուց յետոյ:
4.— Ի՞նչ է անում Սասունցի Դաւիթը, երբ լսում է թշնամու զօրքերի Սասուն գալու լուրը:

29 ՔԱՋ ՈՒ ՄԱՐԴԱՍԷՐ ԴԱՒԻԹԸ

Սասունցի Դաւիթը վաթսունվեց սէգ իջնելով սարից, չողացնում է թուր կայծակին եւ սկսում է աչ ու ճախ ջարդել Թշնամու զօրքերին:

Մարայ զօրքի մէջ կար մի խեղճ ծերուն: Մա տեսնելով իրենց զօրքերի կոտորելը, գնում, կանգնում է Դաւթի դիմաց եւ ասում.

– Դաւի՛թ, արեւիդ մատա՛ղ, մի րոպէ ինձ լսի՛ր, խօսք ունեմ քեզ ասելու:

Դաւիթը իջեցնում է թուրը եւ կանգ առնում: Ծե– րունին շարունակում է իր խօսքերը.

–Որդի՛, ինչո՞ւ ես կոտորում այս խեղճ մարդկանց, սը– րանք ի՞նչ վնաս են տւել քեզ: Այս մարդկանց, որ տես– նում ես, հօ իրենց կամքով չեն եկել, թագաւորը սրանց ուժով է հաւաքել ու բերել կռւի: Այս գինւորներից ամէն մէկը մի ընտանիքի յոյս է, եւ հիմա նրանց հարազատնե– րի աչքը ճամբին է... Ինչո՞ւ ես թուր–կայծակին քաշել այս խեղճ ու անճարակ ժողովրդի վրայ: Քո Թշնամին թագաւորն է, գնա՛ եւ նրա հետ կռւի՛ր, նա է այս Թափած արեան պատճառը:

– Հապա ո՞ւր է ձեր այդ Թագաւորը, – ասում է Դաւիթը:

Ծերունին Դաւթին յայտնում է, Թէ Մելիքը քը– նած է այն մեծ ու չքեղ վրանի տակ, որից ծուխ է ելնում: Այդ ծուխն էլ իսկական ծուխ չէ, այլ նրա բերանի գոլո– շին է:

Դաւիթն էլ չի սպասում, ձին քշում է դէպի Մարայ Թագաւորի վրանը եւ երբ հասնում է այնտեղ՝ բարձր ձայնով ասում է.

– Ո՞ւր է կորել Մելիքը, ինչո՞ւ է այս Թշւառ ու աղքատ մարդկանց բերել ու դրել արեան դաշտը, իսկ ին–


քը մտել վրանը եւ հանդիստ քնել: Ասէ՛ք պ՚ւրս պապ հրատարակ, թէ մահ չ՚ունի, ես նրա մահն եմ բերել: Այնպէս քնեցնեմ նրան, որ էլ երբեք չարթնանայ:

ԲԱՌԵՐ

Անճարակ= *անօգնական, թոյլ*
Թշուառ= *դժբախտ, ողորմելի*

ՀԱՐՑԵՐ

1.— Ի՞նչ է անում Սասունցի Դաւիթը՝ սարից իջնելուց յետոյ:
2.— Ի՞նչ է ասում Մսրայ զօրքի ծեր զինուորը:
3.— Ի՞նչ է անում Դաւիթը՝ ծերունի զինուորի խօսքերը լսելուց յետոյ:



30 ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԸ ՄՄՐԱՅ ՄԵԼԻՔԻ ՄՕՏ

Մարայ Մելիքի վրանի պահապանները Դաւթին յայտնում են, որ Մելիքը եօթն օրով է գնում, երեք օրն անցել է եւ չորս օր էլ դեռ սրտով գնի: Դաւիթը անհամբեր սո՞ւմ է, որ չուտով արթնացնեն նրան:

Պահապանները սոխլաւած մի երկաթէ չամփուր են գնում թէժ կրակի վրայ եւ կարմրացրած երկաթը կըպցընում նրա կրունկին: Մելիքը չուռ է գալիս մէկ կողմից մէսը եւ վինթիվինթուում է քէֆի տակ.

– Օ՛հ, այս լուն չի թողնում մարդ հանգիստ գնի: Ախ ասելով նորից է գնում:

Երկրորդ անգամ պահապանները բերում են մի մեծ խոփ, նորից գնում են թէժ կրակին եւ երբ լաւ կարմրում է, վերցնում գնում են նրա մերկ թիկունքին: Մելիքը քարկացած ասում է.

– Օ՛ֆ, ախ մոծակները քունս խանգարում են: Աչքը բաց է անում եւ պատրաստւում է նորից քնելու, որ յանկարծ տեսնում է Դաւթին. մռնչալով գլուխը բարձրացնում է բարձից ու փչում է, որ նրան թռցնի տեղից: Բայց երբ տեսնում է, որ քաջը տեղից չի շարժւում, վախ է ընկնում սիրտը: Վեր է կենում, նստում եւ սրսիալո աչքերը գցում է Դաւթի վրայ ու կեղծ ժպիտով ասում.

– Բարեւ Դաւիթ, յոգնած ես երեւում, ե՛կ նստի՛ր, խօսենք եւ երէկ կուսել ուզես, յետո՛յ կուխ կանենք:

Բռնակալ ու խորամանկ թագաւորը իր վրանի մի անկիւնում իւր հոր էր փորել տւել, վրան ծածկել էր գորգով, եւ ում, որ չէր կարողանում յաղթել, խաբէով տանում էր այդ կողմը. երբ մարդ ուզում էր գորգի վրայ նստել, ընկնում էր հորը:

Դաւիթն էլ խաբւում է. գնում է գորգի վրայ եւ ընկնում հորը:

Մելիքը չատ է ուրախանում եւ ասում է. «Թող Դաւիթը մեռնի այնտեղ»: Մի մեծ ջաղացքար էլ բերում, դնում է հորի բերանին:

ԲԱՌԵՐ

Շամփուր= *ծայրը սուր երկաթէ ձող, որից օգտուում են խորոված անելու համար:*

Թէժ= *տաք, այրող*

Փնթփնթալ= *քթի տակ ցածր ձայնով խօսել*

Խոփ= *հողագործական գործիք՝ հողը վարելու համար*

Խորամանկ= *ուրիշներին խաբելու մէջ վարպետ մարդ*

ՀԱՐՑԵՐ

1.— Ի՞նչ են անում Մսրայ թագաւորի պահապանները, Մելիքին արթնացնելու համար:

2.— Ինչպէ՞ս է արթնանում Մելիքը եւ ի՞նչ է լինում նրա առաջին գործը:

3.— Ինչպէ՞ս է Մելիքը խաբում Դաւթին:

31 ԴԱՒԻԹԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ՀՈՐԻՑ

Այն օրը, երբ Դաւիթը Մարայ Մեծիքի խաբեբայութեան հետեւանքով, ընկնում է տրտում, նոյն պիշերը Ջէնով Օհանը երազում տեսնում է, որ մեռ ամպ է իջել Սասունի վրայ. Մարայ աստղը պայծառ փայլում է, իսկ Սասունի աստղը խաւարում է:

Օհանը անհանգստացած արթնանում է քնից: Նա հասկանում է, որ Դաւիթը վտանգի մէջ է: Կնոջը քնից արթնացնում եւ նրան յայտնում է իր մտահոգութիւնը: Կինը ուշադրութիւն չէ դարձնում նրա խօսքերի վրայ եւ նորից քնում է:

Ջէնով Օհանն էլ չէր համբերում, դռնից քաշում է իր արագասլաց ձին, հեծնում է եւ քամու պէս քշում է սարի գագաթը:

Այստեղ տեսնում է Դաւթի նժոյգին, որը տխուր ու անտէր պէս ման էր գալիս: Երբ տիրոջ գագաթից նայում է դաշտի կողմը, տեսնում է Մարայ անհամար զօրքերին, որոնք բռնել էին ամբողջ դաշտը: Սիրտը ճմլւում է վշտից: Եօթ դամբէջի կաշի է վաթսաթում իրենն, որպէսզի երբ թարգմանչին կանչում է, չպատռի, այնուհետեւ ամբողջ ուժով ձայն է տալիս.

– Հէ՛յ, հէ՛յ... Դաւիթ, որտե՞ղ ես հիմա, յիշի՛ր այ թեւիդ կապած Ջաջ-Պատերազմին, Տո՛ւր Սուրբ Մարիամ Աստուածածնի անունն ու դուրս ե՛կ լոյս աշխարհ:

Օհանի ձայնը դամբռնամբարում եւ սարերի ու ձորերի մէջ արձագանգելով, դնում հասնում է Դաւթի ականջը: Նա ասում է.

Հայ-հայ, հօրեղբայրս է, որ գոռում է Սասնոյ սարից: Նա չէր մոռացել ինձ:

Ոտքի է կանգնում քաջ սասունցին եւ կանչում է.

– Ո՛վ Մարութայ Աստուածածնին, ո՛վ անմահ Ջաջ-Պատերազմի, ձեզ եմ կանչում:

Այս ասելով նոր ուժ է առանում, զարկում, ջարդ ու փշուր է անում ջաղացքարը եւ դուրս է թռչում հորից ու կանգնում է Մելիքի դէմ-դիմաց:

Չար թագաւորը չէր սպասում այս բանին: Սարսափ է ընկնում սիրտը եւ դողալով, խորամանկաբար դիմում է Դաւիթին ու առաջարկում, որ հաշտուեն իրար հետ:

Դաւիթը հասկանում է, որ Մելիքը նորից ուզում է խաբել իրեն, ուստի նրան ասում է, որ չուտով ձի նստի ու պատրաստուի կռւի համար:

ԲԱՌԵՐ

Մտաճոգութիւն= *անհանգստութիւն*

Նժոյգ= *ընտիր ձի*

Արձագանգ= *ձայնը երբ որեւէ բանի է հանդիպում եւ վերադառնալով կրկնւում է, այդ կրկնութիւնը կոչւում է արձագանգ*

Խորամանկաբար= *խորամանկ կերպով*

ՀԱՐՑԵՐ

1.— Ի՞նչ է տեսնում Ջէնով Օհանը երազում:

2.— Բարձրաձայն ի՞նչ է ասում Ջէնով Օհանը սուրի գագաթից:

3.— Ի՞նչ է անում Դաւիթը հօրեղբօր ձայնը լսելուց յետոյ:

4.— Հորից դուրս գալուց յետոյ Դաւիթը ի՞նչ է անում:

32 ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԹԻ ԿՌԻՒԸ ՄՄՐԱՅ ՄԵԼԻՔԻ ԴԷՄ

Մսրայ Մելիքը վերջապէս համոզուած է, որ էլ չի կարող խաթել Դաւթին, ուստի պատրաստուած է կռուել նրա հետ:

Այն ժամանակուայ առվորութեան համաձայն, կըռուողներից ամէն մէկը իրաւունք ունէր երեք անգամ հարսածել հակառակորդին: Մսրայ Մելիքը առաջարկում է, որ նախ ինքը զարկի: Դաւիթը համաձայնուում է:

Մելիքը վերցնում է իր հակայական ծանր պուրզը, ձի է հեծնում եւ գնալով հեռաւոր մի վայր, այնտեղից ձին թափով քշում է Դաւթի վրայ ու երբ հասնում է քաջին, պուրզով այնպէս ուժգին է զարկում, որ մարդիկ կարծում են թէ երկրաշարժ եղաւ: Մելիքը զօրքին ասում է, թէ մեռաւ Դաւիթը: Բայց հէնց այդ ժամանակ Դաւիթը գոռում է. «կեցո՛ւր եմ...»:

Մելիքն այս անգամ աւելի հեռու տեղից է զալիս Դաւթի վրայ եւ այնպիսի թափով է զարկում, որ ասում են թէ մօտիկ մարդիկ խլանում են զարկի ձայնից: Մըսրայ Մելիքը ասում է, որ Դաւիթը ոչնչացաւ: Սակայն քաջ սասունցին կանչում է, «կեցո՛ւր եմ, մին էլ ա՛րի՛...»:

Այս անգամ Մելիքը ձին քշում է չատ հեռու տեղ եւ այնտեղից իր բոլոր ուժով զալիս է Դաւթի վրայ ու պուրզը մեծ թափով զարկում է: Այս զարկից հսկայական փոշի է բարձրանում եւ ծածկում է արեւի երեսը: Փոշին երեք օր ու գիշեր կանգնում է սմպի նման: Բոլորը կարծում են թէ Դաւիթը մեռել է: Երեք օրից յետոյ, երբ անցնում է փոշին, Դաւիթը կանգնում է սարի նման եւ ասում է.

– Մելի՛ք, հիմա ո՞ւմ հերթն է:

Մելիքն այս լսելով, վախից գնում է չատ խոր հո

Նկարը Յ. Ադոյանի

է վրդովում, մոնոում է մէջը եւ վրան էլ քաշում է քառասուն ջամիջեի վաչի եւ քառասուն ջաղացքար:

ԲԱՌԵՐ

Գուրզ= *երկաթէ գլխով գաւազան*
Խլանալ= *խուլ դառնալ, լսողութիւնը ձեռքից տալ*

ՀԱՐՑԵՐ

1.— Համաձայն այն ժամանակւայ սովորութեան Դաւիթն ու Մելիքը ի՞նչ ձեւ են որոշում իրենց կուի համար:

2.— Ինչպէ՞ս է Մելիքը իր վերջին հարուածը տալիս Դաւթին:

3.— Ի՞նչ է անում Մսրայ թագաւորը, երբ զարկելու հերթը Դաւթին է հասնում:



Սասունցի Դաւիթը հեծնում է Քուռկիկ Ջալալին եւ չղացնելով Թուր Կայծակին, փոթորիկի պէս գալիս է Մարայ Մելիքի վրայ. երբ Թուրը բարձրացնում է, որ զարկի, առաջ է գալիս Մելիքի մայրը եւ խնդրում է, որ Դաւիթը այդ զարկը ՙրպէս մայր՚ ների իրեն:

Ջաջ սասունցին ընդունում է Մելիքի մօր խնդրանքը եւ իջեցնում է Թուրը:

Երկրորդ անգամ երբ Դաւիթը քաշում է Թուրը եւ ուզում է հարւածել, այս անգամ պէմ է գալիս Մելիքի քոյրը եւ աղաչում է, որ Դաւիթը եղբօր փոխարէն իրեն զարկի: Դաւիթը այս անգամ եւս չի հարւածում:

Երրորդ զարկի ժամանակ Դաւիթն ասում է.

–Էլ այս անգամ ՙչ ոք չգայ խնդրելու, Աստուած վկայ, պիտի զարկեմ:

Այս ասելով, Դաւիթը թռցնում է հրեղէն ձին եւ Թուր Կայծակին ու թաւիով զարկում է. Թուրը կտրում, անցնում է քառատուն գոմէշի կաշին, քառատուն ջաղացքարը, երկու կէս է անում դաժան հրէշին եւ եօթը գազ էլ այն կողմ է անցնում, բայց Մելիքը հրի տակից ձայն է տալիս. «կենդանի եմ, Դաւի՛թ»:

Սասունցի Դաւիթը շատ է զարմանում: Նա Մելիքին ասում է, որ լինքն իրեն թաւի տայ. Մելիքը չարժւում է թէ չէ, մարմինը երկու մասի է բաժանւում:

Այս տեսնելով, ատրատի է ընկնում Մարայ բանակի մէջ: Դաւիթը ասում է նրանց.

– Մի վախեցէք. դուք չարքաշ, զրկւած, աշխատաւորը եւ հողագործ մարդի՛կ, դո՛ւք, որ տանջւում էք քաղցից, աղքատութիւնից եւ հարստ ու մի ցաւերից, ինչո՞ւ էք պէնք վերցրել ու եկել թաւիւել օտար երկիրը, չէ որ մենք էլ տուն ու տեղ եւ ընտանիք ունենք, մինչէ ձանձրացե՞լ էք հողագործի հաչտ ու խաղաղ կեանքից, արդեօք պզե՞լ էք

ձեր երկրի դաշտերից: Վերադարձէք ձեր հայրենի երկիրը, բայց եթէ նրանց վէնքով ու զօրքով գաք մեր երկրի վրայ, հոգի մէջ լինէք թէ չաղացքարի տակ, կեցնեմ ձեր դէմ Մատուենցի Դաւիթը իր թուր կայծակիով:

ՀԱՐՑԵՐ

1.— Ովքե՞ր են միջամտում, երբ Դաւիթը ուզում է Մելիքին հարուածել:

2.— Ի՞նչ է պատահում Մելիքի հետ, երբ Դաւիթը զարկում է նրան:

3.— Նկատելով Մսրայ զօրքերի սարսափը, ի՞նչ է ասում Դաւիթը նրանց:



34 ՓՈՔՐ ՄՀԵՐ

Դաւիթը Մարայ զօրքին յաղթելուց յետոյ, խաղաղօրէն իշխում է Սասունին: Նա ամուսնանում է Կապոյտ Բերդի իշխանի աղջկայ՝ Խանդուքի հետ: Նրանք մի զաւակ են ունենում, որի անունը դնում են Միհեր:

Ուրիշ երեխաները տարով էին մեծանում, իսկ Միհերը՝ օրով: Նա էլ իր պապերի պէս հսկայ ուժի տէր էր: Մի օր նորածինն Մհերի ուժը փորձելու համար՝ չղթայով փաթաթում են նրան: Երեխան լացելիս, թասի է տալիս թևերն ու կտրում է չղթան:

Մհերի ծնուելուց մի քանի տարի յետոյ, Սասունցի Դաւիթը կռւի է գնում Զմշկիկ Սուլթանի դէմ: Այդ օրերին, մի անգամ գետի մէջ լողանալիս, Դաւիթը ապանուում է սուլթանի աղջկայ արձակած թունաւոր նետից:

Դաւթի մահւան լուրը հասնում է Սասուն եւ հայ ժողովուրդը խոր սուգի մէջ է մտնում:

Չէնով Օհանը մի խումբ սասունցիների հետ Դաւթի դիակը բերում ու թաղում են Մարութայ մանքի բակում:

Որոշ ժամանակից յետոյ Զմշկիկ Սուլթանը մեծ զօրքով մօտենում է Սասունին. Մհերը յարձակւում է թշնամու բանակի վրայ և մի հերոսական կռւում յաղթում է սուլթանի զօրքերին: Զմշկիկ Սուլթանը կռւի տակ ժամանակ վախչում է:

Այնուհետեւ Փոքր Մհերը կռւում է նաեւ Մարայ թագաւորի հետ եւ յաղթում է նրան:

Պատմում են, որ մի անգամ Փոքր Մհերը գնում է վան: Նա այնտեղ հանդիպում է մի հսկայ քարի, որը կոչւում էր Ագռաւաբար: Թուրը քաշում եւ հարւածում է, քարը երկու մասի է բաժանւում եւ ինքն ու իր ձին մրտնում են քարի մէջ ու վակւում այնտեղ:

Այս լսելով սասունցիները հօրն օր ու գիշեր սուգ են անում:

Ասում են, որ տարին երկու անգամ այդ քարը եր-

կու մասի է բաժանուում. մէկը՝ Վարդավառին, իսկ միւսը՝ Համբարձման դիչերը:

Մհերը հեծած Քուռկիկ Ջալալին այդ երկու օրը չորս անգամ է Սգոտաքարի վրայ:

Ժողովուրդը հաւատացած է, որ Մհերը մի օր վերջնահարկան դուրս է գալու Սգոտաքարի միջից եւ այդ այն օրըն է, երբ չարիքն ու բռնութիւնը վերացած կը լինեն աշխարհից:

ՀԱՐՑԵՐ

1.— Ո՞ւմ հետ է ամուսնանում Սասունցի Դաւիթը:

2.— Ինչպիսի՞ երեխայ էր Փոքր Մհերը եւ ի՞նչ են պատմում նրա մանկութեան մասին:

3.— Ինչպէ՞ս է սպանւում Սասունցի Դաւիթը եւ ի՞նչ են անում Ջէնով Օհանն ու միւս սասունցիները:

4.— Ի՞նչ գիտէք Սգոտաքարի, Մհերի եւ նրա ձիու մասին:

5.— Ի՞նչ առիթներով է Փոքր Մհերը լոյս աշխարհ դուրս գալիս:

6.— Ըստ ժողովրդի պատմածի, ե՞րբ է Փոքր Մհերը վերջնականապէս ազատելու:

ՔԱՐՏԷԶԻ ՎՐԱՅ ՅՈՅՅ ՏԻԷՔ

Վան քաղաքը

Սիրելի երեխաներ,

Ինչպէս տեսաք, այս պիրքը կազմուած է երկու բաժիններից: Առաջին բաժինը հայ ժողովրդի աւանդական պատմութեան մէկ մասն է, որը քաղուած է Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութիւն» գրքից, իսկ երկրորդը՝ «Սասունցի Դաւիթ» հայ ժողովրդական դիւցազնավէպն է, որը յօրինել է հայ ժողովուրդը եւ դարերի ընթացքում բերնէ – բերան պատմելով, հկել հասել է մեզ:

Անմահ Յովհաննէս Թումանեանը մէկն է այն հայ գրողներից, որը գեղեցիկ կերպով մշակել ու գրի է առել «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպի մէկ մասը, որը ընթերցում է մեծ հետաքրքրութեամբ:

Հայ ժողովուրդը, թէ՛ իր աւանդական պատմութեան եւ թէ՛ ժողովրդական վէպի հերոսներին անչափ սիրել ու գնահատել է եւ պատմութեան ընթացքին մի շարք օրինակ պարծնելով նրանց լաւ գործերը իր արեան գնով հայրենիքի ազատութեան ու անկախութեան համար պայքարել է օտար տիրապետութիւնների դէմ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էջ
ԵՐԿՈՒ ԽՕՍՔ	5

Ա. ՄԱՍ

1– ԻՆՉՊԷՍ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՀԱՄԱԽՄԲԻԼ	11
2– ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ	14
3– ՀԱՅԿԻ ԵՒ ԲԷԼԻ ԿՌԻՒԸ (Ա.)	17
4– ՀԱՅԿԻ ԵՒ ԲԷԼԻ ԿՌԻՒԸ (Բ.)	19
5– ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ	21
6– ԱՐԱՄ ՆԱՀԱՊԵՏ	23
7– ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՇԱՄԻՐԱՄ	26
8– ԱՐԱՅԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ	30
9– ՊԱՐՈՅՐ ԹԱԳԱՒՈՐ	33
10– ՏԻԳՐԱՆ ԵՐԻԱՆԴԵԱՆ ԵՒ ԱԺԴԱՀԱԿ	35
11– ՏԻԳՐԱՆԻ ԿՌԻՒԸ ԱԺԴԱՀԱԿԻ ԴԷՄ	40
12– ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱՊԱՖԱՂ	45
13– ԱՐՏԱՇԷՍ ԹԱԳԱՒՈՐ	48
14– ԱՐՏԱՇԷՍԻ ՄԱՀԸ ԵՒ ԱՐՏԱԽԱԶԴ	53
15– ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԼԻ ԵՒ ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՅՍ	55
16– ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ	58

Բ. ՄԱՍ

17– ՋԱՐ ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ԾՈՎԻՆԱՐԻ ԵՐԱԶԸ	63
18– ՀՐԱՇՔ ԱՂԲԻՒՐԸ	66
19– ՍԱՍՈՒՆ	68
20– ՍԱՆԱՍԱՐԸ ՏԻՐԱՆՈՒՄ Է ԹՈՒՐ ԿԱՅԾԱԿԻՆ ԵՒ ՀՐԵՂԷՆ ՁԻՈՒՆ	79
21– ՍԱՆԱՍԱՐՆ ՈՒ ԲԱՂԴԱՏԱՐԸ ԱՋԱՏՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՄՕՐԸ	72
22– ՍԱՆԱՍԱՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ	76
23– ՍԱՆԱՍԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ ԵՒ ՄԵԾ ՄՀԵՐԸ	79
24– ԵՍ ԳԵՐԻ ՁԵՄ ԴԱՌՆԱՑ ԵՐԲԵՔ	82
25– ԴԱՒԹԸ ԳԱՌՆԱՐԱԾ ԵՒ ՆԱԽՐԱՊԱՆ	85
26– ԴԱՒԹԸ ՎԵՐԱՇԻՆՈՒՄ Է ՀՕՐ ՎԱՆՔԸ	88

27– ԴԱՒԹԸ ԻՐ ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆ 91
28– ՀԱՅ ՀԵՐՈՍԸ ՔԱՋ Է ՈՒ ԱԶՆԻՒ 95
29– ՔԱՋ ՈՒ ՄԱՐԴԱՍԷՐ ԴԱՒԹԸ 97
30– ՍԱՄՈՒՆՑԻ ԴԱՒԹԸ ՄՍՐԱՅ ՄԵԼԻՔԻ ՄՕՏ 99
31– ԴԱՒԹԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ՀՈՐԻՑ 101
32– ՍԱՄՈՒՆՑԻ ԴԱՒԹԻ ԿՌԻՒԸ ՄՍՐԱՅ ՄԵԼԻՔԻ ԴԷՄ 103
33– ԴԱՒԹԸ ՎՍՏԱՀ ԷՐ ԻՐ ՀԱՐՒԱԾԻՑ 106
34– ՓՈՔՐ Մ'ՀԵՐ 108

Դասագրքում տեղաբաշխուած նկարների կապակցութեամբ հարկ է նշել, որ դրանցից մէկ մասը գործն է հայ անուանի նկարիչների՝ Ս. Մամաջանեանի, ե. Քոչարի եւ Յ. Կոջոյեանի:

Միեւնոյն ժամանակ օգտագործել են տարբեր դասագրքերի, գրքերի եւ պարբերականների նկարներ:

Մի շարք նկարներ պատկանում են իրանահայ շնորհալի նկարիչ՝ էդուարդ Խաչատրեանի վրձինին, որոնք պատրաստուել են յատկապէս այս դասագրքի համար:

Հայաստանի քարտէզը եւ դասագրքի շապիկը գործն է՝ Սերոժ Սուքիասեանի: